



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԼՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ 14(405) «12» հունիսի 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ		
350	«Արցախի Հանրապետությունում 2020 թվականի ապրիլի 12-ին հայտարարված արտակարգ իրավիճակի ժամկետը երկարաձգելու և Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի ՆՀ-32-Ն հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-54-Ն հրամանագիրը.....	4
351	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-107-Ն հրամանագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-57-Ն հրամանագիրը	5
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
352	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 36-Ն որոշումը.	6
353	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 44-Ն որոշումը.....	9
354	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 45-Ն որոշումը.....	10
355	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 46-Ն որոշումը.....	11
356	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 47-Ն որոշումը.....	12
357	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 829-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 48-Ն որոշումը.....	13
358	«2020 թվականի ամառային զորակոչը կազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 56-Ն որոշումը.....	14
359	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 57-Ն որոշումը.....	21
360	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 58-Ն որոշումը.....	22
361	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 15-ի N 19 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 68-Ն որոշումը.....	23
362	«Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական	

	հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 84 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 70-Ն որոշումը.....	26
363	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 76-Ն որոշումը.....	28
364	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 77-Ն որոշումը.....	29
365	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 78-Ն որոշումը.....	30
366	«Պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 79-Ն որոշումը.....	31
367	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի N 152 որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 80-Ն որոշումը.....	42
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
368	«Անհատ ձեռնարկատեր Լուսինե Բարսեղյանին դեղատնային գործունեություն իրականացնելու լիցենզիա տալու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 166-Ա հրամանը.....	43
369	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 87 հրամանը.....	44
370	«Փոստային վճարման պետական նշանի նմուշները սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 4-Ն հրամանը.....	45
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ		
371	ԱՀ գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/2711/02/18 որոշումը և հատուկ կարծիքը	49

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ՆՀ-32-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Արցախի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19, այսուհետ նաև՝ վարակ) հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակը շարունակում է սպառնալ բնակչության կյանքին և առողջությանը և կարող է հանգեցնել անձանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման,

հիմք ընդունելով այն, որ 2020 թվականի ապրիլի 12-ին արտակարգ իրավիճակ հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները դեռևս չեն վերացել, որի մասին են վկայում, մասնավորապես, 2020 թվականի հունիսի 11-ի դրությամբ հաստատված կորոնավիրուսային հիվանդության 68 դեպքերը, որոնցից 43-ը՝ առողջացած (2020 թվականի ապրիլի 12-ից հետո դեպքերի թվի աճը կազմել է 62), ինչպես նաև այն, որ Արցախի Հանրապետությունում ու Հայաստանի Հանրապետությունում վարակի հետագա տարածումը և վարակի դեպքերի թվի աճը շարունակում է սպառնալ մարդկանց կյանքին ու առողջությանը,

հաշվի առնելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված՝ մարդու՝ որպես բարձրագույն արժեք հանդիսանալու սահմանադրական կարգավիճակը, ինչը պետությանը պարտավորեցնում է շարունակական միջոցներ ձեռնարկել անձանց կյանքի ու առողջության պաշտպանության համար, իսկ 2020 թվականի ապրիլի 12-ին հայտարարված արտակարգ իրավիճակի ընթացքում կիրառված միջոցառումներն ու սահմանափակումներն էական ազդեցություն են ունեցել վարակի տարածման դեպքերը նվազեցնելու գործում,

հիմք ընդունելով այն, որ Արցախի Հանրապետության Սահմանադրության 133-րդ հոդվածի ուժով Արցախի Հանրապետության Նախագահը լիազորված է երկարաձգել արտակարգ իրավիճակի ժամկետը, եթե արտակարգ իրավիճակ հայտարարելու հիմք ծառայած հանգամանքները չեն վերացել մինչև հայտարարված արտակարգ իրավիճակի ժամկետի ավարտը,

և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 20-րդ կետով և 133-րդ հոդվածի 1-ին մասով՝ **ո թ ո շ ու մ եմ**.

1. Երկարաձգել Արցախի Հանրապետությունում 2020 թվականի ապրիլի 12-ին հայտարարված և մինչև հունիսի 11-ը երկարաձգված արտակարգ իրավիճակի ժամկետը 2020 թվականի հունիսի 11-ից, ժամը 22:00-ից՝ 30 օրով՝ մինչև 2020 թվականի հուլիսի 11-ը, ժամը 22:00-ն ներառյալ ժամկետով:

2. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 1-ին կետում «հունիսի 11-ը, ժամը 22:00-ն» բառերը փոխարինել «հուլիսի 11-ը, ժամը 22:00-ն» բառերով:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. հունիսի 11
Ստեփանակերտ
ՆՀ-54-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-107-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի սահմանումից բխող մի շարք միջոցառումների մասին» ՆՀ-107-Ն հրամանագրի (այսուհետ՝ հրամանագիր) 5-րդ կետով հաստատված՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կանոնադրության՝

1) 14-րդ կետի 1-ին, 17-րդ կետի 3-րդ ենթակետերում, 18-րդ կետում, 19-րդ կետի 26-րդ ենթակետում, 30-րդ և 39-րդ կետերում «Արցախի Հանրապետության Նախագահի գլխավոր խորհրդական-հատուկ հանձնարարություններով դեսպան» բառերից և դրանց հոլովածներից առաջ լրացնել «Արցախի Հանրապետության պետական խորհրդական,» բառերը՝ համապատասխան հոլովածներով.

2) 5-րդ գլխի վերնագիրում «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ-ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԴԵՍՊԱՆԸ» բառերից առաջ լրացնել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ,» բառերը.

3) 25.1-ին և 25.2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25.1. Արցախի Հանրապետության պետական խորհրդականի գործառնությունները սահմանվում են Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

25.2. Արցախի Հանրապետության Նախագահի գլխավոր խորհրդական-հատուկ հանձնարարություններով դեսպանի գործառնությունները սահմանվում են Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

25.3. Արցախի Հանրապետության Նախագահի գլխավոր խորհրդականի գործառնությունները սահմանվում են Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:».

2. Հրամանագրի 5-րդ կետով հաստատված՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառուցվածքում 6.1-ին և 6.2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.1. Արցախի Հանրապետության պետական խորհրդական

6.2. Արցախի Հանրապետության Նախագահի գլխավոր խորհրդական-հատուկ հանձնարարություններով դեսպան

6.3. Արցախի Հանրապետության Նախագահի գլխավոր խորհրդական:».

3. Մույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. հունիսի 11
Ստեփանակերտ
ՆՀ-57-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 հունիսի 2020թ.

N 36-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1160-Ն որոշման N 2 հավելվածի առաջին աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՍԵՆԸ ԾԱՆՄԵՐ այդ թվում՝	-	-	-	-
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	(250 000,0)	(250 000,0)	(250 000,0)
	2		Ծերություն	-	(121 000,0)	(183 000,0)	(183 000,0)
		1	Ծերություն	-	(121 000,0)	(183 000,0)	(183 000,0)
		02	Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ		2 000,0	2 000,0	2 000,0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն		2 000,0	2 000,0	2 000,0
		04	Օրենքով և ԱՀ Նախագահի հրամանագրով սահմանված կենսաթոշակներ և դրամական պարգևատրումներ	-	(23 000,0)	(23 000,0)	(23 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(23 000,0)	(23 000,0)	(23 000,0)
		06	Աշխատանքային կենսաթոշակներ	-	(100 000,0)	(162 000,0)	(162 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(100 000,0)	(162 000,0)	(162 000,0)
3			Հարազատին կորցրած անձինք	-	(18 000,0)	(23 000,0)	(23 000,0)
		1	Հարազատին կորցրած անձինք	-	(18 000,0)	(23 000,0)	(23 000,0)
		01	Կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ	-	(18 000,0)	(23 000,0)	(23 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(18 000,0)	(23 000,0)	(23 000,0)
4			Ընտանիքի անդամներ և զավակներ	-	(91 000,0)	(10 000,0)	(10 000,0)
		1	Ընտանիքի անդամներ և զավակներ	-	(91 000,0)	(10 000,0)	(10 000,0)
		03	Պետական նպաստներ	-	(10 000,0)	(10 000,0)	(10 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(10 000,0)	(10 000,0)	(10 000,0)
		06	ԱՀ-ում ծնելիության խթանում	-	(81 000,0)	-	-
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(81 000,0)	-	-

	7		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	(20 000,0)	(34 000,0)	(34 000,0)
		1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	(20 000,0)	(34 000,0)	(34 000,0)
		04	Ամենամսյա դրամական օգնություններ և պարգևավճարներ	-	(20 000,0)	(34 000,0)	(34 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(20 000,0)	(34 000,0)	(34 000,0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉՂԱՍԿՈՂ ԾԱՌՄԵՐ	-	250 000,0	250 000,0	250 000,0
	1		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	250 000,0	250 000,0	250 000,0
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	250 000,0	250 000,0	250 000,0
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	250 000,0	250 000,0	250 000,0
			ԱՀ կառավարություն	-	250 000,0	250 000,0	250 000,0

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի 2020թ.

N 44-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 588 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,2012 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի 2020թ.

N 45-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 382 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Պատարայի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության սեփականությունը հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,873 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Պատարայի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի 2020թ.

N 46-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 458 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Մխիթարաշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,0289 հեկտար, 0,0252 հեկտար և 0,018 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի 2020թ.

N 47-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խրամորթի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,01 հեկտար վարելահողը՝ համաձայն՝ հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի 2020թ.

N 48-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 829-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը
ո ր ո շ ու մ է.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ճանկաթաղի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» N 829-Ն որոշման հավելվածի ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ 19-րդ, 20-րդ և 21-րդ տողերով՝

«

19.	Վարյա Ներսիսյան	վարելահող	105-001	0,42
20.	Ռաֆիկ Ղարիբյան Բորիս Ղարիբյան	վարելահող	103-007	1,08
21.	Աշխեն Վանյան	վարելահող	104-025	0,4

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 հունիսի 2020թ.

N 56-Ն

ք. Ստեփանակերտ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉՐ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի մայիսի 30-ի «2020 թվականի ամառային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ՆՀ-26-Ն հրամանագրի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության 2020 թվականի ամառային զորակոչի ընդհանուր ղեկավարումն ապահովելու նպատակով ստեղծել հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի և շրջանների (Ստեփանակերտ քաղաքի) զորակոչային հանձնաժողովներ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հաստատել հանրապետական զորակոչային հանձնաժողովին կից բժշկական հանձնախմբի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին, Ստեփանակերտի քաղաքապետին՝ զորակոչային հանձնաժողովների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը հանձնարարել հանրապետական զորակոչային հանձնաժողովի նախագահին:

4. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) ամառային զորակոչն անցկացնել սահմանված կարգով՝ 2020 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին.

2) զորակոչից խուսափող Արցախի Հանրապետության քաղաքացիներին վերաբերող նյութերն ուղարկել Արցախի Հանրապետության ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ.

3) ապահովել Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատների կողմից զորակոչիկների սահմանված կարգով ներկայացումը կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ՝ կանխարգելիչ պատվաստումներ ստանալու համար առնվազն մեկ ամիս առաջ մինչև զորակոչը:

5. Առաջարկել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին՝ զորակոչից խուսափող Արցախի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև այդ բնույթի գործերով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը վերցնել անմիջական վերահսկողության տակ:

6. Արցախի Հանրապետության նախարարությունների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) ղեկավարներին՝

1) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակները ստանալուց հետո ապահովել նրանց նկատմամբ աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառումը և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին.

2) իրավասության սահմաններում ապահովել Արցախի Հանրապետության գորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը զինվորական կոմիսարիատներ:

7. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին՝

1) ամառային գորակոչի անցկացման համար զինվորական կոմիսարիատներն ապահովել գորակոչային տեղամասերով, սպասարկող անձնակազմերով, ինչպես նաև նյութական և ավտոտրանսպորտային միջոցներով.

2) զինվորական կոմիսարների ներկայացմամբ հաստատել տարածքային գորակոչային հանձնաժողովների կազմերը (ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների)՝ դրանցում ընդգրկելով վարչատարածքային միավորի սահմաններում գործող բժշկական հաստատությունների առաջատար բժիշկ-մասնագետներին, իսկ Ստեփանակերտում, անհրաժեշտության դեպքում, նաև՝ հանրապետական ենթակայության բժշկական հաստատությունների բժիշկ-մասնագետներին:

8. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացրած հայտով կազմակերպել ֆյուրո (ռենտգեն) գնում, ինչպես նաև կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութերով և ֆյուրո (ռենտգեն) ժապավեններով.

2) Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շարքերում «COVID-19» նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով գորակոչիկներին սահմանված կարգով ենթարկել պարտադիր թեստավորման:

9. Արցախի Հանրապետության ոստիկանության պետին՝

1) ապահովել գորակոչիկների անվտանգ փոխադրումը և հասարակական կարգի պահպանումն Արցախի Հանրապետության գորակոչային տեղամասերում.

2) ապահովել Արցախի Հանրապետության տարածքում և Արցախի Հանրապետության տարածքից դուրս՝ գորակոչից խուսափող գորակոչիկներին որոնումն ու նրանց ներկայանալը գորակոչային տեղամասեր.

3) գորակոչի ընթացքում գորակոչիկներին Ստեփանակերտի սահմաններից դուրս փոխադրող ավտոբուսներն ուղեկցելու համար հանրապետական հավաքակայանին կցել ճանապարհային ոստիկանության համապատասխան անձնակազմ:

10. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարին՝ ապահովել գորակոչիկների փոխադրումը զինվորական կոմիսարիատներից հանրապետական հավաքակայան՝ ըստ զինվորական կոմիսարիատների ներկայացրած հայտերի:

11. Սահմանել, որ գորակոչի կազմակերպման ծախսերը փոխհատուցվում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության միջոցների հաշվին՝ բացառությամբ սույն որոշման 8-րդ կետով կատարվող ծախսերի:

12. Արցախի Հանրապետության ոստիկանության պետին, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ գորակոչից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով ամառային գորակոչի ընթացքում ուժեղացնել վերահսկողությունը Արցախի Հանրապետության սահմանային հաղորդակցության ուղիներում, գորակոչային տարիքի Արցախի Հանրապետության քաղաքացիների Արցախի

Հանրապետությունից մեկնումը թույլատրել միայն զինվորական գրքույկներում ժամկետային զինվորական ծառայությունն ավարտելու կամ հիվանդության պատճառով պահեստագործում գտնվելու, իսկ ամրակցման (նախնական հաշվառման) վկայականներում՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից օգտվելու մասին զինվորական կոմիսարիատների համապատասխան նշումների առկայության դեպքում:

13. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարին՝

1) 2020 թվականի ամառային զորակոչի ընթացքում զորակոչային ռեսուրսներն առավելագույնս օգտագործելու նպատակով փոխադրման, ավարտական քննությունները, դիպլոմային աշխատանքների պաշտպանություններն ավարտել՝

ա. դպրոցներում, քոլեջներում, ուսումնարաններում՝ մինչև 2020 թվականի հուլիսի 11-ը,

բ. բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը,

գ. մինչև 2020 թվականի հունիսի 13-ը Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատին տրամադրել մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ 18 տարին լրացող՝ դպրոցները, քոլեջները և ուսումնարաններն ավարտող և բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննություններին մասնակցելու հայտ ներկայացրած արական սեռի քաղաքացիների անվանական ցուցակները:

14. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին և հանրապետական զորակոչային հանձնաժողովին:

15. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ձ Մ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Մխիթար Էդուարդի Ավշառյան - Արցախի Հանրապետության զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Սամվել Կառլենի Մելքումյան - «Արևիկ» բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերության վիրաբուժական բաժանմունքի պետ, հանձնաժողովի անդամ

Դավիթ Ռոբերտի Արզումանյան - Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի ղեկավար, հանձնաժողովի անդամ

Սասուն Վաչագանի Գաբրիելյան - Արցախի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական, հանձնաժողովի անդամ

Գագիկ Յուրիի Հարությունյան - Արցախի Հանրապետության ոստիկանության հասարակական կարգի ապահովման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ

Էրիկ Արտյոմի Ծատրյան - Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատի գորակոչի բաժանմունքի պետ, հանձնաժողովի քարտուղար

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՍՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ձ Մ

**ՇՐՋԱՆՆԵՐԻ (ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Արմեն Մաղաթի Շիրինյան - Ստեփանակերտի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Զորեն Սերգեյի Ղազարյան - Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Վաղիմ Վյաչեսլավի Հովսեփյան - Ստեփանակերտ քաղաքի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ

Վահրամ Ռաֆայելի Բալայան - Ստեփանակերտ քաղաքի ոստիկանության վարչության ԱԳԲ պետ, հանձնաժողովի անդամ

ՇՈՒՇԻՔԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Դավիթ Բորիսի Սախյան - Շուշիի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Մարգիս Մամիկոնի Գալստյան - Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Արտուր Սերգեյի Սարգսյան - Շուշիի շրջանի դատախազության դատախազ, հանձնաժողովի անդամ

Միքայել Յուրիի Ավանեսյան - Շուշիի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՀԱՂՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Անդրեյ Վալերիի Ներսեսյան - Հաղրութի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Նվեր Վազգենի Գրիգորյան - Հաղրութի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Գագիկ Սերգեյի Իշխանյան - Հաղրութի շրջանի դատախազ, հանձնաժողովի անդամ

Արմեն Լյովայի Բաղդասարյան - Հաղրութի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արսեն Վաղարշակի Աղաբեկյան - Մարտունու զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Վիլեն Անդրեյի Ալավերդյան - Մարտունու շրջանի վարչակազմի ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ-իրավախորհրդատու, հանձնաժողովի անդամ

Հովիկ Ռոդիկի Մկրտչյան - Մարտունու շրջանի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ

Լեոնիկ Գավրուշայի Աբրահամյան - Մարտունու շրջանի ոստիկանության բաժնի ավագ հետաքննիչ, հանձնաժողովի անդամ

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արծվիկ Անդրանիկի Գաբրիելյան - Ասկերանի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Արթուր Յուրիի Հարությունյան - Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Աշոտ Յուրիի Ղուլյան - Ասկերանի շրջանի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ

Նվեր Մլավայի Մեքրումյան - Ասկերանի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Իգոր Ռոբիկի Մարգարյան - Մարտակերտի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Գևորգ Ռոբերտի Հայրապետյան - Մարտակերտի շրջանի դատախազի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Հարություն Արարատի Սահակյան - Մարտակերտի շրջանի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մխիթար Միշայի Ավանեսյան - Շահումյանի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Կարեն Ալբերտի Եղիշյան - Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Դավիթ Վլադիմիրի Ստեփանյան - Շահումյանի շրջանի դատախազ, հանձնաժողովի անդամ

Նարեկ Ռուսլանի Սաղիյան - Շահումյանի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ստեփան Յուրիկի Օհանջանյան - Քաշաթաղի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Իգոր Իսմաիլի Ալավերդյան - Քաշաթաղի շրջանի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ

Արմեն Լյովայի Բալիկյան - Քաշաթաղի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

**ԱՐՑԱՌԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ջ Մ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԿԻՑ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ

Կարինե Էդուարդի Բաղյան	- թերապևտ
Հակոբ Գրիշայի Հակոբյան	- հոգեբույժ
Սրբուհի Ռոմիկի Բաղդասարյան	- նյարդաբան
Անժելա Շահենի Դանիելյան	- քիթ-կոկորդ-ականջաբան
Էդվարդ Ռաֆայելի Ստեփանյան	- վիրաբույժ
Սևակ Էմիրջանի Ասլանյան	- ակնաբույժ
Լեոնիդ Եղիշեի Համբարձումյան	- մաշկաբան
Ինեսա Միքայելի Աղամյան	- սրտաբան
Կարեն Դմիտրիի Դավթյան	- վնասվածքաբան
Աիդա Երեմի Հարությունյան	- ատամնաբույժ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 հունիսի 2020թ.

N 57-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Մելիքավան թաղամասի թիվ 29/2 հասցեում գտնվող, «ՄԻՐԱԺ» արտադրական կոդաբերանովի սեփականությունը հանդիսացող՝ Բնակավայրերի նպատակային նշանակության 0,3 հեկտար բնակելի կառուցապատման հողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ պահեստարանների հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 հունիսի 2020թ.

N 58-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի N 350 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Ասկերանի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,22 հեկտար այլ հողատեսքերը փոխադրել արդյունաբերության, ընդերք-օգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 հունիսի 2020թ.

N 68-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 19 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 15-ի «Ծառայության ժամանակ զոհված (մահացած) փրկարարական ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցման կարգը սահմանելու և ԼՂՀ կառավարության 2000թ. դեկտեմբերի 26-ի թիվ 256 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 19 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում «**ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ**» բառը փոխարինել «**ՀԱՏՈՒՑՄԱՆ**» բառով.

2) որոշման նախաբանում ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» բառերով.

3) որոշման 1-ին կետում.

ա. «Հաստատել» բառը փոխարինել «Սահմանել» բառով,

բ. «փոխհատուցման» բառը փոխարինել «հատուցման» բառով.

4) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի հունիսի 10-ի N 68-Ն որոշման

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2008 թվականի
հունվարի 15-ի N 19 որոշման

Կ Ա Ր Գ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՆՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՊՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են փրկարարական ծառայության ժամանակ գոհված (մահացած), օրենքով սահմանված կարգով գոհված (մահացած) ճանաչված փրկարարական ծառայողների (այսուհետ նաև՝ գոհված ծառայողներ) հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված՝ Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվող ծախսերի չափն ու վճարման կարգը:

2. Փրկարարական ծառայության ժամանակ գոհված ծառայողների հուղարկավորության հետ կապված ծախսերը հատուցվում են նրանց ընտանիքների անդամներին Արցախի Հանրապետության պետական բյուջեի հաշվին՝ 700 000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Փրկարարական ծառայության ժամանակ գոհված ծառայողների (բացառությամբ եղբայրական գերեզմանոցներում հուղարկավորվածների) գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման համար նրանց ընտանիքների անդամներին Արցախի Հանրապետության պետական բյուջեից հատկացվում է 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

4. Ծախսերի հատուցումը նշանակվում է գոհված ծառայողների ընտանիքների՝ Արցախի Հանրապետությունում մշտական հաշվառում ունեցող հետևյալ անդամներից մեկին՝

1) ամուսնուն, կամ

2) հուղարկավորությունը կատարած հարազատներից մեկին (ծնող, զավակ, եղբայր, քույր, պապ, տատ և այլն)՝ ամուսնու բացակայության դեպքում: Սույն կարգի իմաստով՝ ամուսնու բացակայություն է համարվում, եթե՝

ա. գոհված ծառայողը ամուսնացած չէր, կամ

բ. գոհված ծառայողի ամուսինը մահացած է, կամ չունի Արցախի Հանրապետությունում մշտական հաշվառում կամ Արցախի Հանրապետության տարածքում տվյալ պահին փաստացի չի բնակվում:

5. Զոհված ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի հատուցման նպատակով Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը կազմում ու Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) է ներկայացնում այն գոհված ծառայողների ցուցակը, որոնց ընտանիքներին նախատեսվում է Արցախի Հանրապետության պետական բյուջեից հատուցել գոհված ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը: Ցուցակում նշվում են գոհված ծառայողի անձնական տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը), մահվան տարեթիվը, մահվան վկայականի համարը, գոհված ծառայողի ընտանիքի՝ հատուցման գումար ստացող անդամի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները, յուրաքանչյուր գոհված ծառայողի մասով հատուցման ենթակա գումարի չափը, ինչպես նաև գոհված ծառայողի ընտանիքի բնակության վայրի հասցեն:

6. Նախարարությունը սույն կարգի 5-րդ կետի համաձայն ներկայացված տեղեկատվության հիման վրա Արցախի Հանրապետության պետական բյուջեից

հատուցման ենթակա գումարների ֆինանսավորման նպատակով երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմում է ֆինանսավորման հայտ և ներկայացնում Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

7. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հատուցման ենթակա գումարները ստանալուց հետո նախարարությունն այն փոխանցում է «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության տարանցիկ հաշվին, որտեղից սույն կարգի 5-րդ կետում նշված՝ հատուցման գումարը ստանալու իրավունք ունեցող ընտանիքի անդամն անձնագիրը ներկայացնելու դեպքում կարող է ստանալ գումարը:

8. Սույն կարգի 7-րդ կետում նշված գումարն «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության տարանցիկ հաշվին փոխանցելուց հետո նախարարությունն այդ մասին գրավոր տեղեկացնում է Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությանը:

9. Եթե գոհված փրկարարական ծառայողների հուղարկավորությունը, գերեզմանների բարեկարգումն, տապանաքարերի պատրաստումն և տեղադրումն իրականացվել է նրանց ընտանիքների անդամների ուժերով, ապա համապատասխան փաստաթղթեր ներկայացվելու դեպքում հատուցվում է սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված գումարը:

10. Արցախի Հանրապետությունից դուրս այլ վայրերում փրկարարական ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման ծախսերը հատուցվում են գոհված ծառայողների ընտանիքների բնակության վայրում:

11. Ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած և օրենքով սահմանված կարգով մահացած ճանաչված փրկարարական ծառայողների ընտանիքներին հատուցումը կատարվում է սույն կարգի 3-րդ կետով նախատեսված գումարի չափով:»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2020թ.

N 70-Ն

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ
ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 84 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի մայիսի 26-ի ՆՀ-3-Ն հրամանագրով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության կանոնադրությունը, նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» N 84 որոշման (այսուհետև՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, 1-2-րդ կետերում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի» բառերով.

2) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝
ա. վերնագրում «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ» բառերով,

բ. 1-ին, 11-րդ, 26-րդ կետերում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի» բառերով,

գ. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Նախարարության անվանումն է՝

հայերեն լրիվ անվանումը՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն,

ռուսերեն լրիվ անվանումը՝ Министерство труда, социальных и жилищных вопросов Республики Арцах,

անգլերեն լրիվ անվանումը՝ Ministry of Labour, Social Affairs and Housing of Artsakh Republic»:

3) որոշմամբ հաստատված N2 հավելվածի վերնագրում «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ» բառերով:

4) որոշմամբ հաստատված N 3 հավելվածի՝

ա. վերնագրում «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ» բառերով,

բ. աղյուսակում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2020թ.

N 76-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Հ. Թումանյան փողոցի թիվ 66 հասցեում գտնվող, «ԵՎՐՈՍՏՐՈՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը հանդիսացող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,4321 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ խառը կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2020թ.

N 77-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Ա. Տերտերյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող, «Արտ Շինարար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,3463 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ խառը կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2020թ.

N 78-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Հ. Թումանյան փողոցի թիվ 91 հասցեում գտնվող, «Արտ Շինարար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը հանդիսացող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 1,6574 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ խառը կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2020թ.

N 79-Ն

ք. Ստեփանակերտ

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Սահմանել պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ
ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջների համաձայն պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:

2. Օրենքի համաձայն պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներն են՝

1) վարժական հավաքները.

2) զինվորական վարժանքները (հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումները) կամ զորավարժությունները (զորախաղերը).

3) պատերազմական ժամանակի հաստիքների կցագրված քաղաքացիներին պայմանագրային հիմունքներով հաստիքով նախատեսված պարտականությունների կատարման մեջ ներգրավումը:

3. Պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին օրենքով և սույն կարգով սահմանված ծանուցման միջոցով ներգրավվում են Արցախի Հանրապետության զինված ուժերի պահեստագորում հաշվառված քաղաքացիները, ինչպես նաև այդ միջոցառումներին կամավոր կարող են մասնակցել օրենքով սահմանված պահեստագորում գտնվելու սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ զինվորական հաշվառումից հանված անձինք՝ պայմանագրային հիմունքներով:

2. ՎԱՐՇԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԸ

4. Վարժական հավաքները պահեստագորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստագորայինների ներգրավումն է կարճաժամկետ զինվորական ծառայության՝ նրանց ռազմական ունակությունները կատարելագործելու և վերապատրաստելու նպատակով:

5. Վարժական հավաքները հայտարարվում են յուրաքանչյուր տարվա զորահավաքային նախապատրաստության պլանների հիման վրա՝ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից հաստատած միջոցառումների ցանկի, ժամկետների և ներգրավվող թվաքանակի ու մասնագիտությունների համաձայն:

6. Վարժական հավաքների նպատակներն են՝

1) խաղաղ ժամանակ զորամասերի մարտական և զորահավաքային պատրաստականության բարձրացումը.

2) պահեստագորայինների ռազմական ունակությունները կատարելագործման և վերապատրաստման միջոցով համապատասխան թվաքանակով ռազմաուսուցված ռեսուրսների կուտակումը պահեստագորում.

3) պատերազմական ժամանակ անհրաժեշտ ռազմաուսուցված ռեսուրսներով զինված ուժերի լրահամալրումը.

4) ռազմաուսուցված պահեստագորայիններին կնքված պայմանագրի համաձայն ըստ անհրաժեշտության մարտական հերթապահության ներգրավումը:

7. Վարժական հավաքների ժամկետը որոշվում է ըստ անցկացման նպատակի և կարող է տևել մինչև երեք ամիս՝ օրենքով սահմանված պահեստագորի առաջին խմբի համապատասխան կարգում հաշվառված պահեստագորայինների ներգրավման առավելագույն ժամկետների հաշվառմամբ: Անհրաժեշտության դեպքում պահեստագորայինին վարժական հավաքի մեջ ներգրավվելու ժամկետը Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով կարող է երկարաձգվել՝ մինչև երկու ամիս ժամկետով, ինչպես նաև ավելացվել վարժական հավաքների

քանակը՝ չգերազանցելով վարժական հավաքներում գտնվելու՝ օրենքով սահմանված ընդհանուր ժամկետները:

8. Վարժական հավաքների կազմակերպման պլանավորումն իրականացվում է Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շտաբի կողմից: Վարժական հավաքներ պլանավորելիս հիմք են ընդունվում՝

1) գորամասերի և ստորաբաժանումների մարտունակությունը որոշող մասնագետների ընդհանուր հաշվառման առկայությունը, այդ թվում՝ նաև գորքերի լրահամալրման շրջաններում նրանց թվաքանակը:

2) գորամասերի և ստորաբաժանումների մարտունակությունը որոշող մասնագետների հաստիքապաշտոնային պահանջարկը:

9. Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շտաբի իրավասու բաժիններն ու ծառայությունները և Արցախի Հանրապետության հանրապետական զինվորական կոմիսարիատը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին են ներկայացնում հաջորդ տարվա համար վարժական հավաքներ կազմակերպելու վերաբերյալ իրենց առաջարկությունները և հայտերը:

10. Համաձայն վարժական հավաքների անցկացման տարեկան պլանի՝ Արցախի Հանրապետության հանրապետական զինվորական կոմիսարիատը, համապատասխան վարժական հավաքի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ, զինվորական կոմիսարիատներ է ուղարկում կարգազրեք, որոնց հիման վրա պահեստագորայինները կանչվում են վարժական հավաքների: Վարժական հավաքների կանչվում են գորամասերին կցագրված (նախորոշված) պահեստագորայինները, իսկ չկցագրված պահեստագորայիններից համապատասխան զինվորական հաշվառական մասնագիտություններ (այսուհետ՝ ՉՄ) ունեցողները:

11. Վարժական հավաքների անցկացման գործընթացում զինվորական կոմիսարիատները՝

1) համագործակցելով համապատասխան գորամասերի հրամանատարների հետ, իրականացնում են վարժական հավաքներին ներգրավվող պահեստագորայինների ընտրություն:

2) պահեստագորայիններին փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում են վարժական հավաքների կանչվելու մասին (N 1 ձև): Փաստաթղթային եղանակով ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն հանձնելու եղանակով:

3) սահմանված կարգով կազմակերպում են վարժական հավաքներին ներգրավվող պահեստագորայինների առողջական վիճակի հետազոտման գործընթացը:

4) ապահովում են վարժական հավաքներին ընդգրկված պահեստագորայիններին վարժական հավաքի անցկացման գորամաս տեղափոխելու և հետ վերադարձի գործընթացը:

12. Վարժական հավաքների կանչվում են պահեստագորի առաջին խմբում հաշվառված այն պահեստագորայինները, որոնք ունեն համապատասխան զինվորական կամ քաղաքացիական մասնագիտություն կամ դրանց հարակից մասնագիտություններ և պիտանի են զինվորական ծառայության համար: Վարժական հավաքների ընթացքում սպաներ պատրաստելու համար ընտրվում են պահեստագորի բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից:

13. Այն պահեստագորայինները, որոնք ընտրվել են որպես վարժական հավաքներում պատրաստվելու թեկնածուներ, ծանուցվում են վարժական հավաքի անցկացման օրվանից առնվազն 20 օրացուցային օր առաջ՝ զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցկացնելու նպատակով: Պահեստագորայինները կարող են վարժական հավաքի կանչվել զինվորական ծառայությունից արձակվելուց հետո՝ մեկ տարվանից ոչ շուտ:

14. Ծանուցման հիման վրա զինվորական կոմիսարիատ ներկայացած պահեստագորայինն անցնում է բուժհետազոտում, որի արդյունքներով վարժական հավաքի կանչվելու ենթակա ճանաչվելու դեպքում ուղարկվում է վարժական հավաքի անցկացման գորամաս՝ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության ուժերով և միջոցներով: Վարժական հավաքների ընթացքում այն պահեստագորայինների վերաբերյալ, որոնք փաստացի առնչվելու են պետական կամ ծառայողական գաղտնիք հանդիսացող նյութերին կամ արտադրանքին, օրենքով սահմանված կարգով ձևակերպվում են համապատասխան ձևի թույլտվություններ:

15. Վարժական հավաքներ անցկացնող գորամասերի հրամանատարները՝

1) նշանակում են հավաքների պետեր և առանձնացնում են մարտական պատրաստության կազմակերպման ու անցկացման գործում փորձ և գիտելիքներ ունեցող պատրաստված սպաների ու ենթասպաների՝ այդ ժամանակահատվածում նրանց ազատելով իրենց հիմնական ծառայողական պարտականությունների կատարումից:

2) հավաքներն սկսելուց առնվազն մեկ ամիս առաջ, հավաքի անցկացման ծրագրի և նյութատեխնիկական ապահովման պլանների ցուցանիշների համաձայն, հայտերը ներկայացնում են համապատասխան ծառայություններ:

3) հավաքներն սկսելուց մեկ շաբաթ առաջ ուսումնական ծրագրին և ժամահաշվարկին համապատասխան կազմում և հաստատում են պարապմունքների դասացուցակը:

4) հավաքներն սկսելուց երեք օր առաջ անցկացնում են հրահանգչամեթոդական պարապմունքներ այն սպաների ու ենթասպաների համար, որոնք նշանակված են ուսուցանելու պահեստագորայիններին:

5) հատկացնում են անհրաժեշտ թվաքանակով սպառազինություն, տեխնիկա, ուսումնական և ցուցադրական պարագաներ՝ համաձայն վարժական հավաքների անցկացման տարեկան պլանի:

6) պահեստագորայիններին տեղավորելու համար նախապատրաստում են կացարաններ և ստանում են անհրաժեշտ թվաքանակով հանդերձանք:

7) մարտական հերթապահության ընդգրկվող պահեստագորայինների հետ հերթապահության մեկնելուց յոթ օր առաջ անցկացնում են մարտական հերթապահության նախապատրաստման պարապմունքներ:

16. Վարժական հավաքների ղեկավարները պատասխանատու են հավաքներին ընդգրկված պահեստագորայինների մարտական պատրաստության պարապմունքների պատշաճ կազմակերպման և անցկացման, պահեստագորայինների կողմից գաղտնի փաստաթղթերի, սպառազինության և ռազմական տեխնիկայի հետ վարվելու և պահպանելու համար:

17. Վարժական հավաքների ընթացքում պահեստագորայինների ուսումնական ժամանակի (ուսումնական պարապմունքների) տևողությունը սահմանվում է տվյալ գորամասի անձնակազմի համար սահմանված կարգով: Հավաքների կանչված պահեստագորայինները համարվում են զորանոցային դրության մեջ: Հավաքների անցկացման վայրից նրանց ազատ արձակումը սահմանված կարգով թույլատրում են հավաքների ղեկավարները:

18. Վարժական հավաքի ընթացքում քաղաքացին համարվում է զինծառայող, գրանցվում է վարժական հավաքի անցկացման վայրի գորամասի անձնակազմի ցուցակներում և վերցվում բոլոր տեսակի բավարարումների, նրան հաշվարկվում է նշանակված զինվորական պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափ, ամրակցվում է զենք, ռազմամթերք և անհատական պաշտպանության միջոցներ, նրա վրա տարածվում են զինծառայողների համար օրենքով սահմանված իրավունքները և պարտականությունները, սոցիալական երաշխիքները, վարժական հավաքի ժամանակահատվածն օրացուցային հաշվարկով ներառվում է քաղաքացու զինվորական ծառայության կամ աշխատանքային ընդհանուր ստաժում:

19. Վարժական հավաքների ընթացքում պահեստագորայինները չեն կարող ներգրավվել վարժական հավաքի ուսումնական ծրագրով սահմանված իրենց պարտականությունների հետ չառնչվող աշխատանքների:

20. Վարժական հավաքին մասնակցելու ընթացքում քաղաքացու հիմնական աշխատանքի վայրում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) պահպանվում է քաղաքացու աշխատատեղը (պաշտոնը):

21. Վարժական հավաքի ընթացքում պահեստագորայինի մասնակցությունը վարժական հավաքին վաղաժամկետ դադարեցվում է պահեստագորայինի նկատմամբ օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցվելու կամ պահեստագորայինի առողջական վիճակի պատճառով, որոնց դեպքում գորամասերի հրամանատարներն այդ մասին տեղեկացնում են համապատասխան զինվորական կոմիսարիատին՝ նշելով վարժական հավաքի պահեստագորայինի մասնակցությունը վաղաժամկետ դադարեցնելու հիմքը:

22. Վարժական հավաքների ավարտից հետո անցկացվում է անցած ծրագրային նյութի յուրացման գնահատում, որն իրականացվում է զինված ուժերում գործող մարտական պատրաստության ուսումնական փուլերի գնահատման ձևաչափով: Գնահատման արդյունքներով պահեստագորայիններին կարող են շնորհվել նոր

զինվորական հաշվառման մասնագիտություններ: Բարձր առաջադիմություն ցուցաբերած պահեստագորայինները կարող են ներկայացվել հերթական զինվորական կոչման շնորհման: Համաձայն գորամասերից ստացված տվյալների՝ զինվորական կոմիսարիատները գնահատման ցուցանիշները գրանցում են պահեստագորայինների հաշվառման փաստաթղթերում:

23. Վարժական հավաքների ավարտից հետո գորամասերի հրամանատարները՝

1) կազմում են վարժական հավաքներն ավարտած պահեստագորայինների անվանացուցակները՝ նշելով հավաքների տևողությունը, զինվորական հաշվառման մասնագիտություններն ու պաշտոնները, որոնցով նպատակահարմար է հետագայում հաշվառել պահեստագորայիններին: Ձինվորական գրքույկներում կատարվում են հավաքներ անցնելու վերաբերյալ նշումներ, որոնք գորամասի հրամանատարը (շտաբի պետը) ստորագրում և կնքում է գորամասի կնիքով: Մարտական հերթապահության ներգրավվման դեպքում զինվորական գրքույկներում կատարվում են համապատասխան նշումներ:

2) պահեստագորի սպաների, ինչպես նաև սպաների պատրաստություն անցած ենթասպաների համար կազմում են բնութագրեր և եզրակացություն պահեստագորայինի հերթական կամ առաջին զինվորական կոչման շնորհման նպատակահարմարության մասին: Պահեստագորի սպաների և ենթասպաների անձնական գործերի համապատասխան բաժիններում կատարվում են նրանց կողմից վարժական հավաքներ անցնելու վերաբերյալ նշումներ, որոնք գորամասի հրամանատարն ստորագրում և կնքում է գորամասի կնիքով:

3) վարժական հավաքների ավարտման օրը պահեստագորայիններին տրամադրում են կարգագրեր (N 2 ձև)՝ 7-օրյա ժամկետում համապատասխան զինվորական կոմիսարիատներում հաշվառման կանգնելու համար:

24. Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շտաբի իրավասու բաժիններն ու ծառայությունները և Արցախի Հանրապետության հանրապետական զինվորական կոմիսարիատը տվյալ տարվա ընթացքում անցկացված վարժական հավաքների արդյունքների վերաբերյալ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը զեկուցում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին:

3. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՎԱՐՇԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. Ձինվորական վարժանքները (հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումներ) և գորավարժությունները (գորախաղերը) հանդիսանում են պահեստագորի առաջին և երկրորդ խմբերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստագորայինների ներգրավմամբ զինված ուժերի գորահավաքային պատրաստականության վիճակի ստուգման միջոցառումներ:

26. Ձինվորական վարժանքները (հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումներ) և գորավարժությունները (գորախաղերը) հայտարարվում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ յուրաքանչյուր տարվա զինված ուժերի գորահավաքային պատրաստականության պլանների հիման վրա:

27. Ձինվորական վարժանքների և գորավարժությունների անցկացման նպատակն է՝

1) գորամասերի գորահավաքային պատրաստականության մակարդակի որոշումը:

2) մարդկային և տրանսպորտային ռեսուրսների գորահավաքի պլանավորված միջոցառումների կատարման ժամկետների իրատեսության ստուգումը:

3) լրահամալրմամբ (գորահամալրմամբ) գորամասերը խաղաղից պատերազմական ժամանակի անցման և մարտական ներդաշնակման անցկացման ստուգումը:

4) պահեստագորայինների ռազմական ունակությունների և հմտությունների կատարելագործումն ըստ այն պաշտոնների, որոնց նրանք նախորոշված (կցագրված) են ըստ պատերազմական ժամանակի հաստիքների:

28. Պահեստագորի առաջին կամ երկրորդ խմբերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստագորայինները կարող են կանչվել զինվորական վարժանքների և գորավարժությունների՝ ոչ ավելի, քան տարեկան երկու անգամ:

29. Պահեստագործի առաջին կամ երկրորդ խմբերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստագործայինները զինվորական վարժանքների (հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումներ) կարող են կանչվել մինչև 10 օրացուցային օր ժամկետով, իսկ զորավարժությունների (գորախաղերի)՝ դրանց տևողության ամբողջ ժամկետով:

30. Պահեստագործայինը զինվորական վարժանքների կամ զորավարժությունների կանչվում է իր հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կողմից տրված փաստաթղթային կամ էլեկտրոնային ծանուցագրի (N 3 ձև) համաձայն: Պահեստագործայինի փաստաթղթային եղանակով ծանուցումն իրականացվում է պահեստագործայինին ծանուցագիրն առձեռն հանձնելու միջոցով: Ծանուցման հիման վրա զինվորական կոմիսարիատ ներկայացած պահեստագործայինը սահմանված կարգով անցնում է բուժհետազոտում, որի արդյունքներով անցկացվող միջոցառմանը ներգրավվելու ենթակա ճանաչվելու դեպքում ուղարկվում է միջոցառման անցկացման գործմաս՝ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության ուժերով և միջոցներով:

31. Անցկացվող միջոցառմանը մասնակցելու ընթացքում պահեստագործայիններն ապահովվում են անվճար սննդով և զինվորական համազգեստով՝ զինծառայողների համար սահմանված կարգով, և քնելատեղով, իսկ միջոցառման ավարտից հետո միանվագ ձեռքով վճարվում են համապատասխան կազմերի պայմանագրային զինծառայողների համար սահմանված դրամական ապահովությանը համարժեք չափով և կարգով:

32. Զինվորական վարժանքների կամ զորավարժությունների ավարտից հետո զորամասերի հրամանատարները պահեստագործայինների զինվորական գրքույկներում կատարում են համապատասխան միջոցառմանը մասնակցելու վերաբերյալ նշումներ, ստորագրում և կնքում են զորամասի կնիքով, ինչպես նաև պահեստագործայիններին տրվում են կարգագրեր՝ տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայանալու համար (N 2 ձև):

33. Զինվորական վարժանքների կամ զորավարժությունների մասնակցելու ընթացքում քաղաքացու հիմնական աշխատանքի վայրում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) պահպանվում է քաղաքացու աշխատատեղը (պաշտոնը) և միջին աշխատավարձը:

4. ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԿՑԱԳՐՎԱԾ ՔԱՂԱՔԱԳԻՆԵՐԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՈՒԼՔՆԵՐՈՎ ՀԱՍՏԻՔՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐՎԱԿՈՒՄԸ

34. Պատերազմական ժամանակի հաստիքների կցագրված քաղաքացիներին հաստիքով նախատեսված պարտականությունների կատարման մեջ ներգրավումն իրականացվում է պետական լիազոր մարմնի և քաղաքացու միջև մեկ տարի ժամկետով կնքվող պայմանագրի միջոցով, որը չի համարվում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր: Քաղաքացու կողմից հաստիքով նախատեսված պարտականությունների իրականացման կարգը և պայմանները սահմանվում են պայմանագրով:

35. Պատերազմական ժամանակի հաստիքների կցագրված քաղաքացիներին պայմանագրային հիմունքներով հաստիքով նախատեսված պարտականությունների կատարման մեջ (այսուհետ՝ ակտիվ պահեստագործային ծառայություն) ներգրավումը համալիր միջոցառումներ են, որոնք իրականացվում են զինվորական կոմիսարիատների և զորամասերի կողմից: Այն ներառում է՝

- 1) ակտիվ պահեստագործային ծառայություն անցնելու ցանկություն ունենալու հանգամանքի ճշտումը.
- 2) քաղաքացիների ծանուցումը և ակտիվ պահեստագործային ծառայության նրանց ներգրավման կազմակերպումը.
- 3) անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը.
- 4) քաղաքացիների ներկայանալը զինվորական կոմիսարիատներ և նախորոշված (կցագրված) զորամասեր:

36. Ակտիվ պահեստագործային ծառայության ներդրման նպատակն է՝

- 1) զինված ուժերի համալրվածության անհրաժեշտ թվաքանակի պահպանումը.
- 2) զինված ուժերի կառավարման մարմինների պատրաստակալության բարձրացումը.

3) զինված ուժերի կառավարման մարմինների և ստորաբաժանումների մարտական հնարավորությունները որոշող պատերազմական ժամանակի պաշտոններին կցագրված պահեստագորայինների ունակությունների կատարելագործումը:

4) զինված ուժերի առանձնահատուկ պահանջների ու խնդիրների բավարարման համար հատուկ մասնագետներին (բժիշկներ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի և կիբեռանվտանգության մասնագետներ և այլն) ներգրավումը:

37. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունում որոշվում են այն գործառնակները և ստորաբաժանումները, որտեղ նպատակահարմար է իրականացնել ակտիվ պահեստագորային ծառայություն, ինչպես նաև այն ՁՀՄ-ները, որոնք ունեցող պահեստագորայինները կարող են ներգրավվել ակտիվ պահեստագորային ծառայությանը: Նշված ցուցանիշների հիման վրա որոշվում է ակտիվ պահեստագորային ծառայության ներգրավվող անհրաժեշտ քաղաքացիների թվաքանակը, որը ներառվում է պլանային տարվա զինված ուժերի պատրաստության պլանում:

38. Համաձայն Արցախի Հանրապետության զինված ուժերի պատրաստության պլանի՝ Արցախի Հանրապետության հանրապետական զինվորական կոմիսարիատը զինվորական կոմիսարիատներ է ուղարկում համապատասխան ցուցումներ և կարգադրեր, որոնց հիման վրա իրականացնում են ակտիվ պահեստագորային ծառայության ներգրավվող քաղաքացիների ուսումնասիրում, թեկնածուների ընտրություն և հաշվառում՝ հետագայում նրանց ծառայության ներգրավման նպատակահարմարությունը որոշելու համար:

39. Ակտիվ պահեստագորային ծառայության գործընթացում զինվորական կոմիսարիատները՝

1) համագործակցելով համապատասխան գործառնակների հրամանատարների հետ, իրականացնում են ակտիվ պահեստագորային ծառայության ներգրավվող քաղաքացիների (թեկնածուների) ընտրություն և հաշվառում:

2) իրականացնում են ակտիվ պահեստագորային ծառայություն անցնելու ցանկություն հայտնած քաղաքացիների սահմանված կարգով բժշկական հետազոտման կազմակերպումը:

40. Ակտիվ պահեստագորային ծառայություն անցնելու թեկնածուներ ընտրվում են պահեստագորի առաջին, իսկ սպայական կազմի դեպքում նաև երկրորդ խմբում հաշվառված, անհրաժեշտ կամ հարակից ՁՀՄ ունեցող, գործառնակին կցագրված, ինչպես նաև չկցագրված պահեստագորայիններից, եթե նրանք ցանկություն են հայտնում կնքել ակտիվ պահեստագորային ծառայություն անցնելու պայմանագիր և առողջական վիճակի պատճառով պիտանի են իրականացնելու ծառայություն: Պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվության ձևակերպման ենթակա պաշտոնների անվանակարգությունում ընդգրկված պաշտոնի համար նախորոշված ակտիվ պահեստագորայինների վերաբերյալ օրենքով սահմանված կարգի համաձայն ձևակերպվում են անհրաժեշտ ձևի թույլտվություններ:

41. Ակտիվ պահեստագորային ծառայություն անցնելու ցանկություն հայտնած պահեստագորայինի հետ սույն կարգում սահմանված պայմանագիր կնքում է համապատասխան գործառնակի հրամանատարը: Կնքված պայմանագրի հիման վրա պահեստագորայինը նախորոշվում է համապատասխան պաշտոնի՝ համաձայն նրա կրթության, ՁՀՄ-ի և զինվորական կոչման և հրամանագրվում գործառնակի հրամանատարի հրամանով:

42. Ակտիվ պահեստագորային ծառայություն անցնելու ժամանակահատվածում պահեստագորայինն իր պարտականությունների կատարման մեջ ներգրավվում է՝

1) ամսական 3 օր՝ մասնագիտական գիտելիքների պատշաճ մակարդակը, ռազմական ունակությունները կատարելագործելու, ամրակցված զենքն սպասարկելու նպատակով (պատրաստության պարապմունքներ):

2) նախորոշված գործառնակի մարտական պատրաստականության բարձր աստիճանների բերման դեպքում ըստ պատերազմական ժամանակի հաստիքների լրահամարվելիս կամ գորահամարվելիս՝ դրանց տևողության ամբողջ ժամկետով:

3) նախորոշված գործառնակի կամ ստորաբաժանումը մարտական հերթապահության ընդգրկվելու ժամանակ նրա կազմում մարտական հերթապահության իրականացման նպատակով մինչև 30 օր ժամկետով:

43. Ակտիվ պահեստագորային ծառայության ներգրավված պահեստագորայինների մարտական պատրաստությունն իրականացվում է մասնագիտական պատրաս-

տության ծրագրերի համաձայն: Ձորամասերի հրամանատարները պատասխանատու են ներգրավված պահեստագորայինների մարտական պատրաստության պարապմունքների կազմակերպման և անցկացման մակարդակի ու նյութատեխնիկական ապահովման համար:

44. Ձորամասերի հրամանատարները՝

1) ակտիվ պահեստագորային ծառայության ներգրավված պահեստագորայինների մարտական պատրաստության պարապմունքների կազմակերպման և անցկացման նպատակով նշանակում են մարտական պատրաստության կազմակերպման ու անցկացման գործում փորձ և գիտելիքներ ունեցող պատրաստված սպաների ու ենթասպաների՝ այդ ժամանակահատվածում նրանց ազատելով այլ պարտականություններ կատարումից:

2) հաստատված ծրագրի և նյութատեխնիկական ապահովման պլանների ցուցանիշների համաձայն հայտեր են ներկայացնում համապատասխան ծառայություններ:

3) պատրաստության պարապմունքներին հատկացնում են անհրաժեշտ թվաքանակով սպառազինություն, տեխնիկա, ուսումնական և ցուցադրական պարագաներ:

4) պահեստագորայիններին գրանցում են զորամասի անձնակազմի ցուցակներում, նրանց ամրակցում են զենք, ռազմամթերք և անհատական պաշտպանության միջոցներ, ապահովում են զինվորական հանդերձանքով:

5) ակտիվ պահեստագորային ծառայության ավարտից հետո պահեստագորայինների զինվորական գրքայիններում կատարում են ծառայություն անցնելու վերաբերյալ նշումներ, ստորագրում և կնքում են զորամասի կնիքով:

45. Պահեստագորայինն իր պարտականությունների կատարմանը նախորոշված զորամաս ներկայանում է պայմանագրով նախատեսված ժամկետում և ըստ անհրաժեշտության՝ նախորոշված զորամասի ծանուցագրով սահմանված ժամկետում:

46. Ակտիվ պահեստագորային ծառայություն անցնելու ժամանակահատվածում պահեստագորայինն իր պարտականությունների կատարմանը ներգրավված ընթացքում զորամաս մեկնումը և զորամասից վերադարձն իրականացնում է իր միջոցների հաշվին:

47. Ակտիվ պահեստագորային ծառայություն անցնելու ժամանակահատվածում պահեստագորայինը պատրաստության պարապմունքներին ներգրավված ընթացքում ապահովվում է անվճար սննդով, ըստ պատերազմական ժամանակի հաստիքների լրահամալրվելիս կամ զորահամալրվելիս իր պարտականությունների կատարմանը ներգրավված ընթացքում նաև քնելատեղով:

48. Ակտիվ պահեստագորային ծառայություն անցնելու ժամանակահատվածում պահեստագորայինները չեն կարող ներգրավվել իրենց պարտականությունների հետ չառնչվող աշխատանքների:

49. Պահեստագորայիններն ակտիվ պահեստագորային ծառայություն անցնելու ժամանակահատվածում վարձատրվում են համապատասխան կազմերի պայմանագրային զինծառայողների համար սահմանված դրամական ապահովությունը համարժեք չափով՝ պայմանագրով նախատեսված կարգով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Քաղաքացի _____
Բնակության վայրը _____

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն Արցախի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Դուք կանչվում եք 20__ թվականի ____ -ից մինչև 20__ թվականի _____ -ը կազմակերպվող վարժական հավաքին:

Անհրաժեշտ է 20__թ. _____-ի _____-ին ժամը _____-ին
(ամիսը) (օրը)

ներկայանալ _____ զինվորական կոմիսարիատ հետևյալ հասցեով՝
_____ վարժական
հավաքի վայր մեկնելու համար:

_____ **ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ**

(զինկոմիսարիատ)

(ստորագրությունը,

կոչումը, անունը, ազգանունը)

Կտրման գիծ

ՄՏԱՑԱԿԱՆ

" ____ " _____ 20__ թվականին վարժական հավաքի վայր մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրն ստացա:

(անունը, հայրանունը, ազգանունը)

(ստորագրությունը)

" ____ " _____ 20__ թ.

Ծանուցագիրն էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում:

Քաղաքացի _____

ԿԱՐԳԱԳԻՐ

Համաձայն «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 8-րդ մասի՝ Դուք պարտավոր եք 7-օրյա ժամկետում ներկայանալ _____ հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ՝ հաշվառման կանգնելու նպատակով:

_____ գործառնալի հրամանատար

(ստորագրությունը,

կոչումը, անունը, ազգանունը)

Կտրման գիծ

ՍՏԱՑԱԿԱՆ

7-օրյա ժամկետում զինվորական կոմիսարիատ ներկայանալու կարգազիրն ստացա "___" _____ 20___ թվականին:

(անունը, հայրանունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Քաղաքացի _____
Բնակության վայրը _____

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Համաձայն Արցախի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Դուք կանչվում եք 20__ թվականի _____ -ից մինչև 20__ թվականի _____ -ը կազմակերպվող _____ :
(միջոցառման անվանումը)

Անհրաժեշտ է 20__ թ. _____ -ի _____ -ին ժամը _____ -ին
(ամիսը) (օրը)

ներկայանալ _____ զինվորական կոմիսարիատ հետևյալ հասցեով՝
_____ կազմակերպվող միջոցառման
վայր մեկնելու համար:

_____ **ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ**
(զինկոմիսարիատ)

(ստորագրությունը,

կոչումը, անունը, ազգանունը)

Կտրման գիծ

ՄՏԱՑԱԿԱՆ

" ____ " _____ 20__ թվականին

(միջոցառման անվանումը)

վայր մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիրն ստացա:

(անունը, հայրանունը, ազգանունը)

(ստորագրությունը)

" ____ " _____ 20__ թ.

Ծանուցագիրն էլեկտրոնային եղանակով ուղարկվելու դեպքում ստացականը չի լրացվում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2020թ.

N 80-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 152 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի «Հարկադիր կատարողին ներկայացվող մասնագիտական և առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու մասին» N 152 որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-ին կետի «Մասնագիտությունը» սյունակը «շինարարություն» բառից հետո լրացնել «, մանկավարժություն» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«4» հունիսի 2020թ.

N 166-Ս

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ
ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 2-րդ կետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ

1. Անհատ ձեռնարկատեր Լուսինե Բարսեղյանի (հասցե՝ Արցախի Հանրապետություն, Ասկերանի շրջան, գյուղ Նորագյուղ) հայտը բավարարել և տալ դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ) իրականացնելու համար լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա. ԲԱՂԹԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«05» հունիսի 2020թ.

N 87

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՄԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 27-ի N 357-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1.Դադարեցնել՝

1) **անհատ ձեռնարկատեր Կարո Նարիմանի Գրիգորյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00119 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

2) **անհատ ձեռնարկատեր Գուրգեն Գրիգորի Ավագյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00309 լիցենզիայի և լիցենզիայի N00003 ներդիրի գործողությունները:

2. Ենթոյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2020 թվականի հունիսի 9-ի

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՍԱՄԻՆ**

N 4-Ն

ՀՐԱՄԱՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշները՝ «Վայրի բնության պահպանություն» շարքից «Արցախի ֆլորա» թեմայով մեկական նամականիշ՝ համաձայն NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածների:

2. Գործողության մեջ դնել՝ «Վայրի բնության պահպանություն» շարքից «Արցախի ֆլորա» թեմայով մեկական նամականիշ՝ սահմանելով յուրաքանչյուրի անվանագինը՝ 70-ական ՀՀ դրամ, ընդհանուր տպաքանակը՝ 39 200 հատ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թվականի հունիսի 9
ք.Ստեփանակերտ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի
և արտադրական ենթակառուցվածքների
նախարարի 2020թ. հունիսի 9-ի N 4-Ն հրամանի



Հավելված N 2
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի
և արտադրական ենթակառուցվածքների
նախարարի 2020թ. հունիսի 9-ի N 4-Ն հրամանի




Հավելված N 3
Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի
և արտադրական ենթակառուցվածքների
նախարարի 2020թ. հունիսի 9-ի N 4-Ն հրամանի



Հավելված N 4
Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի
և արտադրական ենթակառուցվածքների
նախարարի 2020թ. հունիսի 9-ի N 4-Ն հրամանի



Հավելված N 5
Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի
և արտադրական ենթակառուցվածքների
նախարարի 2020թ. հունիսի 9-ի N 4-Ն հրամանի



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԴԴ/2711/02/18
Քաղաքացիական գործ ԸԴԴ/2711/02/18

Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Դատավորներ՝ Ն.Գրիգորյան
Ռ.Ջհանգիրյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

26-ին մայիսի 2020թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝
Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝
մասնակցությամբ՝ դատավորներ՝

Ն.Նարիմանյանի
Ի.Կարապետյանի
Ա.Աբրահամյանի
Հ. Աբրահամյանի
Կ.Ղարայանի

Դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Էմմա Սամսոնի
Ծատրյանի և Պավել Գրիգորիի Ծատրյանի ընդդեմ Մագուրա Գրիգորիի
Պետրոսյանի, ԱՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1
նոտարական գրասենյակի պետնոտարի, ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական
ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի
կադաստրի վարչության՝ նվիրատվության պայմանագիրն անվավեր
ճանաչելու և անվավերության հետևանքները կիրառելու պահանջների մասին
քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի
2020 թվականի փետրվարի 12-ի որոշման դեմ հայցվոր Պավել Ծատրյանի
վճռաբեկ բողոքը,

ՊԱՐՁԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Էմմա Սամսոնի Ծատրյանն ու Պավել Գրիգորիի Ծատրյանը 2018
թվականի դեկտեմբերի 4-ին ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի միջոցով հայց
են ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության
առաջին աստիճանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին աստիճանի դատարան)
ընդդեմ Մագուրա Գրիգորիի Պետրոսյանի, ԱՀ ԱՆ Ստեփանակերտ
նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտար Նելլի
Ենոքի Գրիգորյանի, ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների
նախարարության աշխատակազմի անշարժ գույքի վարչության՝ 2018
թվականի հոկտեմբերի 16-ին կնքված և նույն օրն ԱՀ ԱՆ Ստեփանակերտ
նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտարի
կողմից վավերացված ու սեղանամատյանի թիվ 4769 համարի տակ գրանցված
նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և, որպես
անվավերության հետևանք, 22.10.2018թ. թիվ 2210201801-0008 վկայականով
հավաստված Մագուրա Գրիգորիի Պետրոսյանի անվամբ կատարված
պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,
հիմնավորելով հայցը նրանով, որ գործարքը կնքելու պահին Է. Ծատրյանը

վատառողջ էր, գտնվում էր անկողնային վիճակում, հիշողության հետ կապված խնդիրներ ունի, ոչ գրաճանաչ է, չի հաճախել դպրոց, չէր կարող հասկանալ նվիրատվության գործարքի էությունը և հետևանքները, իսկ Պ. Ծատրյանը նույնպես վատառողջ էր, վիրահատություն տարած, գտնվում էր մոլորված, վախեցած վիճակում, նրա մասով առկա է գործարքն անվավեր ճանաչելու ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 311-313-րդ հոդվածներով նախատեսված երեք հիմք: Գործարքի կնքման արդյունքում հայցվորները մնացել են առանց սեփականության, անօթևան մնալու սպառնալիքի պայմաններում: Հայցադիմումում վկայակոչված են նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ, 14-րդ, 15-րդ, 303-րդ, 304-րդ, 305-րդ հոդվածները:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ:

Առաջին ատյանի դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին հայցվորի միջնորդությունը բավարարվել է և արգելանք դրվել Ստեփանակերտ քաղաքի Գ.Նժդեհի 68/30 հասցեով գտնվող բնակարանի վրա՝ արգելելով պատասխանողին որևէ գործողություն կատարելը:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հունվարի 17-ի որոշմամբ հրավիրվել է նախնական դատական նիստ 2019 թվականի փետրվարի 7-ին:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ գործը նշանակվել է դատական քննության՝ 2019 թվականի մարտի 7-ին:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հունիսի 28-ի որոշմամբ հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի միջնորդությունը մասնակի բավարարվել է և հայցվոր Պավել Ծատրյանի նկատմամբ նշանակվել դատահոգեբուժական փորձաքննություն, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև փորձագետի եզրակացությունը ստանալը:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, և գործը նշանակվել դատական քննության 2019 թվականի սեպտեմբերի 18-ին:

Առաջին ատյանի դատարանի (դատավոր Մ.Ստեփանյան) 2019 թվականի նոյեմբերի 22-ի վճռով Պավել Ծատրյանի հայցը մերժվել է, իսկ Էմմա Ծատրյանի հայցի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել հայցվորի հայցից հրաժարվելու հիմքով:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), հայցվոր Պ. Ծատրյանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով գործը, 2020 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է և Առաջին ատյանի դատարանի վճիռը թողել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2020 թվականի մարտի 12-ին վճռաբեկ բողոք է բերել հայցվոր Պ.Ծատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել պատասխանող Մ.Պետրոսյանի ներկայացուցիչ Ա.Ապրեսյանը:

Գերագույն դատարանի 2020 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է որոշման մեջ նշված ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար, սահմանելով 20-օրյա ժամկետ (որոշումը ստանալու պահից):

Գերագույն դատարանի նշված որոշումը բողոքաբեր Պ. Ծատրյանը ստացել է 2020 թվականի ապրիլի 8-ին և նույն թվականի ապրիլի 27-ին կրկին ներկայացրել վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2020 թվականի մայիսի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական նորմերի խախտումների հիմքերով:

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

1) Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, անօրինական, չի բխում գործող օրենսդրության պահանջներից, կայացվել է մի շարք նյութական և դատավարական նորմերի խախտմամբ: Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել նյութական իրավունքի նորմերը, մասնավորապես՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ, 312-րդ, 600-րդ հոդվածները, ինչն ազդել է գործով կայացված վերջնական դատական ակտի վրա:

Նշված պնդումը բողոքում հիմնավորվել է հետևյալ փաստարկներով.

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ, 290-րդ, 311-րդ, 312-րդ, 313-րդ հոդվածների բովանդակությունը և դրանք ենթարկելով վերլուծության, մեջ բերելով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները, բողոքաբերը նշել է, որ հայցվոր Պ. Օստրյանը, տառապելով հոգեբանի կողմից նշված հիվանդությամբ (հոգեբանական օրգանական սինդրոմ), ավելի հեշտ է ընկել մոլորության և խաբեության ազդեցության տակ, քան կարող էր ընկնել հոգեպես առողջ մարդը: Թույլ և անկայուն հոգեբանություն ունեցող մարդուն ավելի հեշտ է մոլորության մեջ գցել: Պ. Օստրյանը թեև գործունակ է, սակայն ունենալով ախտորոշված հոգեբանական օրգանական սինդրոմ հիվանդություն, գործարքը կնքելու պահին ընդունակ չէր հասկանալու իր գործողությունների նշանակությունը, հետևանքները, Պ. Օստրյանի կողմից կնքված նվիրատվության պայմանագիրը չի արտահայտել նրա իրական կամքը:

Ըստ բողոքի՝ նվիրատվության պայմանագիրը պետք է իր մեջ կրի նվիրատուի կամքի արտահայտությունը, կամքի արտահայտությունը պետք է լինի սթափ, վստահ, ինչպես նաև նվիրատուն պետք է գիտակցի նվիրատվության պայմանագրի հետևանքները: Պ. Օստրյանն այլ սեփականություն չունի, իր միակ բնակվելու վայրը եղել է վիճելի բնակարանը: Թե՛ պատասխանող Մ. Պետրոսյանին և թե՛ նրա ամուսին Գ. Պետրոսյանին հայտնի է եղել Պ. Օստրյանի հիվանդ լինելու փաստը, և, բնականաբար, վերջիններս գիտեին, թե ինչպես խոսեն նրա հետ և ինչպես ազդեցություն գործեն նրա վրա: Էմմա Օստրյանն իր միակ սեփականությունը չէր նվիրի ոչ ոքի, քանի որ նա այլ բնակվելու տեղ չուներ: Նա դեռևս 12.07.2015թ. արտահայտել էր իր կամքը՝ կազմելով կտակ և բնակարանի իր 1/2 բաժինը կտակելով իր որդի Պ. Օստրյանին: Առկա է համապատասխան ապացույց այն մասին, որ Է. Օստրյանը բազմիցս՝ տարբեր օրերի հստակ ասում էր, որ Մ. Պետրոսյանին տուն չի տալու, քանի որ արդեն ամեն ինչ տվել է, ու եթե տա, ապա ինքը որտեղ պիտի ապրի, տունը Պավլիկինն է:

Բողոքաբերը փաստել է նաև, որ իր մայրը՝ Էմմա Օստրյանը, լինելով 86 տարեկան, տառաճանաչ չի եղել և երբեք չի հաճախել դպրոց, եղել է հիվանդ և հաճախ տարբեր բաներ էր խոսում ու, բնականաբար, չէր կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունն ու իմաստը:

Բողոքաբերի պնդմամբ՝ նվիրատուները չեն տիրապետել հայերենին և ռուսերեն գրել են «դարյու», մինչդեռ նոտարը պարտավոր էր գործարքը կնքելու ժամանակ հրավիրել թարգմանչին: Բացի այդ, նոտարը նվիրատուներին չի բացատրել նվիրատվության գործարքի հետևանքները:

Ըստ բողոքի՝ ուսումնասիրելով նոտարի ցուցմունքը, կարելի է հաստատված համարել, որ գործարքը կնքման պահից անօրինական է հետևյալ պատճառաբանություններով.

Կողմերը ներկայացել են գրասենյակ սկզբում կտակ կազմելու մտադրությամբ, սակայն նոտարը բացատրել է, որ կտակը ուժի մեջ է մտնում

մահից հետո: Ինչու նոտարի կողմից առաջարկվել է կնքել նվիրատվության պայմանագիրը, այլ ոչ՝ ռենտայի: Նվիրատվության պայմանագրի հետևանքները չի բացատրվել, ընդամենը նշված է, որ նվիրատուները չեն տիրապետել հայերենին և ռուսերեն գրել են «դարյու»:

Ըստ բողոքի՝ նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո Է.Մատրյանին և Պ. Մատրյանին 2015 թվականի օգոստոսի 15-ից խնամում էր Արթուր Մատրյանը, քանի որ վերջինս փաստացի բնակություն էր հաստատել վիճելի բնակարանում: Այդ ընթացքում Ա.Մատրյանը հավուր պատշաճի իրականացում էր թե՛ իր տատիկի, և թե՛ իր հոր խնամքը: Նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո, ինչպես նաև Է. և Պ. Մատրյանների կողմից դատարան դիմելուց մի քանի ամիս հետո, անհասկանալի պատճառով, Մ.Պետրոսյանն Է.Մատրյանին տանում է իր տուն, որից հետո Է.Մատրյանը հրաժարվում է հայցից, այն էլ՝ նոտարական կարգով վավերացված հայտարարությամբ, այն դեպքում, երբ Է.Մատրյանն ունի ներկայացուցիչ: Հատկանշական է նաև այն փաստական հանգամանքը, որ Է.Մատրյանը 22.06.2015թ. կազմել է կտակ, համաձայն որի՝ բնակարանը կտակել է իր որդուն՝ Պավել Մատրյանին:

Բողոքաբերի պնդմամբ՝ դատարանի՝ փորձագետին ուղղված հարցադրումները սխալ են, քանի որ ակնհայտ է, որ պետք է պարզվեր ոչ թե այն, թե Պ.Մատրյանը կարող է արդյոք ներկայումս հասկանալ իր գործողությունների իմաստը և նշանակությունը, այլ՝ գործարքը կնքելու պահին: Ամենակարևոր հանգամանքը, որի վրա ստորադաս դատարանները ուշադրություն չեն դարձրել, այն է, որ փորձագետները փաստել են, որ Պ.Մատրյանը տառապում է նյարդաբանական հիվանդությամբ, հետևաբար պետք է փորձագետներին լրացուցիչ հարցադրումներ ուղղել այն մասին, թե նշված հիվանդությունը գործարքը կնքելու պահին կարող էր բացասական ազդեցություն ունենալ Պ.Մատրյանի վրա, թե ոչ:

2) Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել դատավարական իրավունքի նորմերը, չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 47-րդ, 49-րդ, 121.1-ին հոդվածները:

Շարադրելով վերը նշված հոդվածների և նույն օրենսգրքի 122-րդ հոդվածի բովանդակությունը, բողոքաբերը պնդել է, որ դատարանը գործով բազմակողմանի քննություն չի կատարել, սխալ է գնահատել և համադրել գործում առկա ապացույցները, անտեսել է 122-րդ հոդվածի իմպերատիվ պահանջը և դատական ակտ է կայացրել՝ բացառապես հիմնվելով ներքին համոզմունքի վրա:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ դատարանը կողմերի միջև ճիշտ չի բաշխել ապացուցման բեռը, չի հստակեցրել, թե դատավարության որ կողմի վրա է դրվում գործով էական փաստերի ապացուցման բեռը, դատարանը որևէ ապացուցման բեռ չի դրել գործարքը վավերացրած նոտարի վրա, դատական ակտն ըստ էության չի համապատասխանում առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներին, քանի որ ոչ բոլոր ապացույցներն են հետազոտված հավուր պատշաճի: Առանց քննության են մնացել Է. Մատրյանի կասկածելի միջնորդությունը՝ հայցից հրաժարվելու մասին, ինչից հետո մեկ ամիս անց վերջինս մահացել է, Պ. Մատրյանին մոլորության մեջ գցելու և բազմաթիվ անգամներ սպառնալու փաստերը, փորձաքննության եզրակացությունը (որը չի կարող լինել արժանահավատ այն պարզ պատճառով, որ այն իրականացվել է մակերեսորեն): Ըստ բողոքի՝ հիշատակված բոլոր հիմքերը գործի ելքի համար ունեն կարևորագույն նշանակություն, քանի որ խոսքը գնում է մարդու ճակատագրի մասին, մարդու միակ ապրելու բնակարանի մասին:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ ստորադաս դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել

նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և անհրաժեշտ է գործով իրականացնել նոր քննություն, քանի որ առկա են նոր երևան եկած փաստական հանգամանքներ, որոնք քննության առարկա չեն դարձվել, և որ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի 12.02.2020թ. որոշումը և այն փոփոխել. կայացնել դատական ակտ՝ ներկայացված հայցապահանջն ամբողջությամբ բավարարելու մասին, կամ բեկանել որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ այլ կազմով՝ նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

2020 թվականի մարտի 12-ին ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանում նշվում է, որ հայցվոր կողմն ինչպես վերաքննիչ բողոքում, այնպես էլ վճռաբեկ բողոքում, վկայակոչելով ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 3-11-րդ, 313-րդ, 312-րդ, 600-րդ հոդվածները, նկատի է ունեցել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 311-313-րդ, 600-րդ հոդվածների պահանջները, սակայն իր կողմից վկայակոչված հոդվածների պահանջների խախտումները հիմնավորող որևէ ապացույց կամ հիմնավորում ո՛չ վերաքննիչ բողոքում և ո՛չ էլ վճռաբեկ բողոքում չի ներկայացրել: Առաջին աստիճանի և Վերաքննիչ դատարանները սույն գործի քննության ընթացքում նյութական և դատավարական նորմերի խախտումներ թույլ չեն տվել ու դատաքննությամբ ձեռք բերված, հետազոտված ու հիմնավորված ապացույցների հիման վրա կայացրել են օրինական և պատճառաբանված դատական ակտեր, ուստի բողոքն ակնհայտ անհիմն է, ավելին՝ բացակայում են այն վարույթ ընդունելու դատավարական հիմքերը:

Վճռաբեկ բողոքի պատասխանի հեղինակը նշել է նաև, որ այն հանգամանքը, որ նվիրատու Պ. Ծատրյանը մինչև նվիրատվության պայմանագիր կնքելը և պայմանագիրը կնքելու ընթացքում չի եղել մոլորության կամ խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո և կողմերի միջև կնքված նվիրատվության պայմանագիրն արտահայտել է նվիրատու Էմմա և Պավել Ծատրյանների իրական կամքը, ու միայն պայմանագիրը կնքելուց որոշակի ժամանակ անց է Պ.Ծատրյանը մտափոխվել, բացի Պ.Ծատրյանի ցուցմունքից, հիմնավորվել է նաև պատասխանողներ Մ.Պետրոսյանի, նոտար Ն.Գրիգորյանի, վկա Գ.Պետրոսյանի ցուցմունքներով, դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1) Թիվ 103095 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Գ.Նժդեհի փողոցի թիվ 68 շենքի թիվ 30 հասցեում գտնվող բնակարանն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Էմմա Սամսոնի Ծատրյանին և Պավել Ծատրյանին (հատոր 1-ին, գ.թ.11):

2) 2018 թվականի հոկտեմբերի 16-ին նոտարական կարգով վավերացված նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Էմմա Սամսոնի Ծատրյանի, Պավել Գրիգորի Ծատրյանի և Մագուրա Գրիգորիի Պետրոսյանի միջև կնքվել է անշարժ գույքի (բնակարանի) նվիրատվության պայմանագիր, ըստ որի՝ Է.Ծատրյանը և Պ.Ծատրյանը համատեղ սեփականության

իրավունքով իրենց պատկանող Ստեփանակերտ քաղաքի Գ.Նժդեհի փողոցի թիվ 68 շենքի թիվ 30 բնակարանը նվիրել են Մագուրա Պետրոսյանին (հատոր 1-ին, գ.թ.14):

3) Նվիրատվության պայմանագրի հիման վրա 2018 թվականի հոկտեմբերի 22-ին գրանցվել է Մագուրա Պետրոսյանի սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ.15):

4) Հայցվոր Է.Օատրյանը 2019 թվականի մարտի 29-ին նոտարական կարգով վավերացված դիմում է ներկայացրել դատարան՝ ինչպես հայցից, այնպես էլ փաստաբանի ծառայություններից հրաժարվելու և վերջինիս լիազորությունները դադարեցնելու մասին (հատոր 1-ին, գ.թ.121-122):

5) Հայցվոր Է.Օատրյանը 2019 թվականի ապրիլի 23-ին մահացել է (հատոր 1-ին, գ.թ.142):

6) 2019 թվականի օգոստոսի 20-ի թիվ 58/19 դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Պավել Օատրյանը չի տառապել և ներկայումս չի տառապում որևէ հոգեկան հիվանդությամբ, առկա է «Գլխուղեղի օրգանական ախտահարման մնացորդային երևույթներ, ասթենո ներոտիկ համախտանիշ» նյարդաբանական հիվանդություն: Ներկայումս Պավել Գրիգորիի Օատրյանը հասկանում է իր գործողությունների փաստացի նշանակությունը և կարողանում է ղեկավարել իր գործողությունները: Ուստի, Պ. Գրիգորյանին հարկ է ճանաչել գործունակ (հատոր 2-րդ, գ.թ.3-7):

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշման՝ օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու և առերևույթ թույլ տրված դատական սխալի առկայության հանգամանքներով:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ բողոքն անհիմն է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Արցախի Հանրապետության Մահմանադրության «Սեփականության իրավունքը» վերտառությամբ 60-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից՝ բացառությամբ դատական կարգով օրենքով սահմանված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) «Սեփականության իրավունք» վերտառությամբ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր սեփականության հարգանքի իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել իր սեփականությունից այլ կերպ, քան միայն ելնելով հասարակության շահերից և օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ պետությունները պարտավոր են ոչ միայն ձեռնպահ մնալ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված անձի սեփականության իրավունքը խախտելուց, այլ նաև ընդունել այնպիսի օրենսդրություն, որը կպաշտպանի անձի սեփականության իրավունքը՝ այլ անձանց ոտնձգություններից: Որոշ հանգամանքներում, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը կարող է պարտադրել «որոշ անհրաժեշտ միջոցառումներ սեփականության իրավունքը պաշտպանելու համար (...), նույնիսկ այն դեպքում, երբ վեճը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև է» («Sovtransauto holding v. Ukraine», 25/07/2002, app. no. 48553/99, § 96):

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայի նշված դրույթով երաշխավորված իրավունքի արդյունավետ իրականացումը կախված է ոչ միայն պետության չմիջամտելու պարտականությունից, այլև կարող է պահանջել ձեռնարկել պոզիտիվ պաշտպանության միջոցներ. «... հատկապես, եթե ուղղակի կապ է առկա միջոցների միջև, որոնց ձեռնարկումը դիմողը կարող է օրինական կերպով ակնկալել իշխանություններից իր սեփականության հարգման իրավունքի արդյունավետ իրականացման համար» («Öneryildiz v. Turkey», GC 30/11/2004, app.no. 48939/99, §134):

ԱՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն:

ԼԴՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ԼԴՀ քաղաքացիական օրենսգրքի գործարքի հասկացությունը սահմանող 289-րդ հոդվածն ամրագրում է. «Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն»:

Իսկ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (...) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

Վերը նշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ քաղաքացիական օրենսդրության կարևոր սկզբունքներից մեկն իրավահարաբերության մասնակիցների կամքի ազատ իրականացման սկզբունքն է:

Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների խախտված իրավունքների վերականգնումն ապահովելը, դրանց դատական պաշտպանությունը ևս օրենսդիրը դիտում է իբրև հիմնարար սկզբունք: Այդ

սկզբունքի իրականացումն իրագործվում է գործարքների անվավերության ինստիտուտի միջոցով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ գործարքն անվավեր է՝ նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

Նույն օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

Նույն օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը դատարանով կարող է անվավեր ճանաչվել մոլորության ազդեցության ներքո գործած կողմի հայցով: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի կամ դրա առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը, որոնք զգալիորեն պակասեցնում են այն ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունները: Գործարքի շարժառիթների վերաբերյալ մոլորությունն էական նշանակություն չունի:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կնքված գործարքը, ինչպես նաև այն գործարքը, որն անձն ստիպված է եղել կնքելու ծանր հանգամանքների բերումով իր համար ոչ ձեռնտու պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը (ստրկացուցիչ գործարք), տուժողի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Ուստի, գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: «Կամքն» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է: Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Իր հերթին, այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ՝ արտաքին ներգործության ազդեցությամբ:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքում Պ.Ծատրյանը բարձրացրել է իր կողմից նվիրատվության պայմանագիրը կնքելու պահին մոլորության, ինչպես նաև սպառնալիքի ազդեցության տակ լինելու փաստարկը: Այս առնչությամբ Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում փաստել, որ Վերաքննիչ դատարանը, հանգամանալից վերլուծելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ և 313-րդ հոդվածները, իրավացիորեն արձանագրել է, որ էական նշանակություն ունի գործարքի բնույթի կամ դրա առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը, որոնք զգալիորեն պակասեցնում են այն ըստ նշանակության օգտագործելու

հնարավորությունները: Գործարքի շարժառիթների վերաբերյալ մոլորությունն էական նշանակություն չունի: Էական նշանակություն ունեցող մոլորությունն առկա է, երբ կնքված գործարքը չի արտահայտում կողմերի իրական կամքը, չի կարող հանգեցնել այն իրավական հետևանքներին, որոնք նրանք ի նկատի են ունեցել գործարքի կնքման պահին: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի, մասնավորապես, գործարքի էության, դրա հետևանքների, կողմերի հարաբերությունների բովանդակության վերաբերյալ մոլորությունը: Գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը նշանակում է, որ կողմերը կամ նրանցից մեկը նկատի են ունեցել ոչ այն առարկան, որին վերաբերում է կնքված գործարքը, այլ հատկանիշներով տարբերվող մեկ այլ առարկա:

Մոլորությունը՝ գործարք կնքած կողմի կամքի շեղումն է (կամքի խեղաթյուրումը) կամ շեղման արդյունքը, որն ունի որոշիչ ազդեցություն գործարքի կնքման և (կամ) դրա կնքման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վրա: Այն, որպես կանոն, հիմնված է սխալ ենթադրության (պատկերացման) վրա: Մոլորության ազդեցության տակ կնքված գործարքում կողմի կամքը համապատասխանում է նրա կամահայտությանը, սակայն այն ձևավորվում է գործարքի կնքման համար նշանակություն ունեցող հանգամանքների սխալ պատկերացման արդյունքում, որոնք կարող են պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով (օրինակ՝ անուշադրությունը, կրթության ոչ բավարար մակարդակը, գործարքի առարկայի կամ գործարքի այլ պայմանների մասին անհրաժեշտ տեղեկության բացակայությունը կամ դրա ոչ բավարար կամ թերի լինելը):

Ընդ որում, մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, երբ մոլորությունն էական է: Մոլորության էական կամ ոչ էական բնույթը դատարանը յուրաքանչյուր դեպքում պարզում է՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից և այն իրողությունից, թե որքանով է մոլորությունը նշանակալից, զգալի՝ գործարքի տվյալ մասնակցի համար: Ընդ որում, էական նշանակություն ունեցող մոլորությունը պետք է առկա լինի գործարքի կնքման պահին, այլ ոչ թե ծագի գործարքը (պայմանագիրը) կնքելուց հետո որոշ ժամանակ անց:

Այսինքն, օրենսդիրը որպես գործարքն անվավեր ճանաչելու հիմք դիտում է գործարքի բնույթի կամ դրա առարկայի վերաբերյալ էական նշանակություն ունեցող մոլորությունը: Մինչդեռ, գործարքի շարժառիթների վերաբերյալ մոլորությունն էական նշանակություն ունենալ չի կարող:

Գործարքի բնույթը տվյալ գործարքի մի շարք հատկանիշների (պայմանների) համակցությունն է, որը հնարավորություն է տալիս տարբերել մեկ գործարքը մեկ այլ գործարքից: Այսինքն՝ գործարքի բնույթը, ըստ էության, գործարքի տեսակն է: Գործարքի բնույթի վերաբերյալ մոլորությունն առկա է այն դեպքում, երբ կողմը, որը գործել է մոլորության ազդեցության տակ, ի վերջո չի հասել այն նպատակի իրականացմանը, որին ուղղված է եղել նրա կամքը, և որը նկատի է ունեցել գործարքը կնքելիս: Այլ կերպ ասած՝ գործարքը կնքած կողմերից մեկի կամքը (ցանկությունը) ուղղված է եղել որոշակի գործարքի, օրինակ՝ առուվաճառքի պայմանագրի կնքմանը, մինչդեռ գտնվելով մոլորության ազդեցության տակ՝ կնքել է մեկ այլ գործարք, օրինակ՝ նվիրատվության պայմանագիր:

Իր հերթին, գործարքի առարկա կարող են լինել ինչպես նյութական առարկաները (օրինակ, առուվաճառքի պայմանագրի դեպքում՝ որոշակի ապրանքը, անշարժ գույքը), այնպես էլ որոշակի գործողությունները (օրինակ, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի դեպքում՝ ծառայություններ մատուցելը, կապալի պայմանագրի դեպքում՝ համապատասխան աշխատանքների կատարումը): Հետևաբար, գործարքի

առարկայի հասկանիչների վերաբերյալ մոլորությունն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ գործարքի առարկան իր է, այլ նաև այն դեպքում, երբ այն որոշակի գործողություն է: Գործարքի առարկայի հասկանիչների վերաբերյալ մոլորությունը դրսևորվում է այն դեպքում, երբ կնքված գործարքի առարկան չի համապատասխանում այն հասկանիչներին, որը կողմը նկատի է ունեցել ի սկզբանե նման գործարք կնքելիս:

Քանի որ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները գործարք են կնքում որոշակի նպատակով և այդ նպատակին հասնելու համար արտահայտում են իրենց կամքը, որն էլ պետք է արտահայտվի առանց որևէ արտաքին ազդեցության, ուստի, այն դեպքերում, երբ գործարք կնքող անձն ազատ չի արտահայտել իր կամքը, արտաքին ազդեցության հետևանքով նրա կամքը խաթարվել է, նա իրավունք ունի վիճարկել այդպիսի կամահայտնությամբ կնքված գործարքը: Այդ տիպի գործարքներն անվավեր ճանաչելու հիմքն արտաքին հակաիրավական գործողությունների միջոցով անձին խեղաթյուրված կամք դրսևորելուն հասցնելու հետևանքով նրա կամքին չհամապատասխանող գործարք կնքելն է:

Նման գործարք է նաև խաբեության ազդեցության ներքո կնքված գործարքը: Խաբեությունը, անձին գիտակցաբար մոլորության մեջ գցելն է՝ նրա հետ գործարք կնքելու նպատակով: Գործարքը, լինելով կամային ակտ, ենթադրում է, որ կողմերից ոչ մեկը չպետք է այնպիսի միջոցներ գործադրի, որպեսզի մյուս կողմը չիմանա կամ սխալ պատկերացնի այն հանգամանքները, որոնք նրա համար վճռական նշանակություն կարող են ունենալ գործարքը կնքելիս: Խաբեությամբ կնքված գործարքներում մեկ կողմի անբարեխղճությունն անպայման ենթադրվում է: Այսինքն, խաբեությունը գործարքի կողմերից մեկի գիտակցաբար դրսևորած անբարեխիղճ վարքագիծն է՝ ուղղված նրան, որ գործարքի մյուս կողմն իր համար ձեռնտու պայմաններով կնքի գործարքը: Գործարքի կնքման մեջ շահագրգռված, անբարեխիղճ կողմն իր մեղավոր գործողություններով մյուս տուժող կողմի մոտ ստեղծում է իրականությանը չհամապատասխանող տպավորություն գործարքի էության, առարկայի, պայմանների վերաբերյալ՝ ազդելով նման գործարք կնքելու նրա որոշման վրա: Ընդ որում, եթե տուժող կողմի կամքը խաթարվել է գործարքի կողմ (ներկայացուցիչ) չհանդիսացող այլ անձանց կողմից՝ առանց գործարքի կողմի որևէ կերպ մասնակցության, ապա գործարքը չի կարող վիճարկվել խաբեության հիմքով, քանի որ գործարքը խաբեության ազդեցության տակ կնքված որակելու համար անհրաժեշտ պայման է այն, որ գործարք կնքելիս տուժող կողմի կամքը խաթարված լինի գործարքի մյուս կողմի (ներկայացուցչի) մեղավոր վարքագծի՝ այդ թվում և այլ անձանց միջոցով դրսևորված գործողությունների հետևանքով: Այսպիսով, գործարքը խաբեության ազդեցության տակ կնքված լինելու հիմքով անվավեր ճանաչվելու համար տուժող կողմը պետք է որոշակի ապացույցներ ներկայացնի իր կամքը խաթարվելու հարցում գործարքի մյուս կողմի (ներկայացուցչի) կողմից անձամբ կամ այլ անձանց միջոցով մեղավոր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) մասնակցության մասին:

Նշվածների համատեքստում Գերագույն դատարանն արձանագրում է, որ գործով ոչ մի ապացույց ձեռք չի բերվել այն մասին, որ հայցվոր Պավել Ծատրյանը վիճարկվող նվիրատվության պայմանագիրը կնքել է մոլորության ազդեցության տակ կամ խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո: Այս առումով, Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արձանագրել է հետևյալը. «Նշված փաստը հերքվել է նաև պատասխանող Մագուրա Պետրոսյանի և պայմանագիրը վավերացրած նոտարի կողմից: Ավելին, Դատարանի դատական նիստում հայցվոր Պավել Ծատրյանը ցուցմունք է տվել, որ ինքն է սկզբում ցանկացել վիճելի բնակարանը «տալ» իր եղբոր որդուն, սակայն, վերջինս դեմ է եղել կտակի ձևակերպմանը,

հետագայում՝ 2018 թվականին, որոշել է «տալ» իր քրոջը՝ Մագուրա Պետրոսյանին և նրա մոտ բացելով իր խաղաքարտերը, վիճելի բնակարանը նրան նվիրելու ցանկության մասին հայտնել է նրան: Երկու անգամ գնացել է նոտարական գրասենյակ, առաջին անգամ նոտարն իրեն առաջարկել է լավ մտածել, քանի որ եթե փոշմանի, հետո ուշ է լինելու, երկրորդ անգամ, իր համաձայնությամբ նվիրատվության պայմանագիրը վավերացվել է նոտարի կողմից: Իրեն ոչ ոք չի ստիպել գնալ այդ քայլին, Մագուրայի ամուսինը՝ Գարիկը, տան հետ կապված իրեն ոչինչ չի ասել: Նա իրեն գումարի հետ կապված է ասել, որ ինքը պայմանավորվածությունից հետ չկանգնի և իր որդուն՝ Արթուր Ծատրյանին տված 10.000.000 ՀՀ դրամ գումարը հետ պահանջի նրանից: Ինքը հարբած չի եղել, ընդամենը 1-2 բաժակ էր խմել, որից հետո ստորագրել է ինչ-որ դիմումի տակ, որը Գարիկը հանձնել է ոստիկանություն, իսկ հետագայում պարզվել է, որ այն վերաբերում էր Արթուրից գումարը հետ պահանջելուն: Նվիրատվության պայմանագիրը կնքելու պահին ինքն ընդհանրապես ակոհող օգտագործած չի եղել: Պայմանագրի կնքման մասին հայտնել է իր որդուն, ով նախատել է իրեն ասելով, որ ինքը «պրծած մարդ է, բոմժ, մնալու է դրսում», որից հետո դիմել է Դատարան, որովհետև սխալվել ու փոշմանել էր, որ տունը տվել է քրոջը, մտածելով, որ մնալու է առանց տան»:

Այսպիսով, Գերագույն դատարանը հիմնավոր և իրավաչափ է համարում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, թե վիճարկվող նվիրատվության պայմանագիրը կնքելիս հայցվոր Պավել Ծատրյանի ներքին կամքն ու կամահայտնությունն իրականում համապատասխանել են, քանի որ նա հստակ գիտակցել է, թե ինչ գործարք է կնքում, ինչը նշանակում է, որ կնքված գործարքն արտահայտել է նրա իրական կամքը և հանգեցրել այն իրավական հետևանքներին, որոնք նա ի նկատի է ունեցել գործարքի կնքման պահին:

Ինչ վերաբերում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածը սխալ կիրառելու մասին բողոքի փաստարկին, ապա Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն այն իրավացիորեն չի կիրառել՝ հոդվածի կարգավորումը սույն գործի փաստական հանգամանքներին առնչություն չունենալու հիմքով:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից դատավարական իրավունքի նորմի առերևույթ խախտում թույլ տված լինելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի հիմքին, Գերագույն դատարանը փաստում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Իսկ նույն օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը սահմանում են, որ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք, եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա

հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Գերագույն դատարանն արդեն իսկ բազմիցս անդրադարձել է նշված հոդվածներին և արձանագրել, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է գործում առկա բոլոր ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն այդ պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը: Դատարանը պետք է պարզի, թե ինչ ապացույցների հետազոտմամբ է հնարավոր հաստատել կողմերի պահանջների և առարկությունների հիմքում ընկած իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը և այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Դատարանը, յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (օրինակ՝ Գրենա Աշոտի Միրզաջանյան v. Ալլա Վլադիմիրի Խաչատրյան, ԸԻԴ/0257/02/16թ., Արծվիկ Հայկի Մարտիրոսյան v. Վանիկ Գառնիկի Բաբայան, ԸԻԴ/2482/02/15թ., Սուսաննա Ալեքսանդրի Դադայան v. Կարինե Ռաշիդի Հակոբյան, ԸԻԴ/0158/02/16թ և այլն):

Նշվածների համատեքստում, Գերագույն դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը գործում գտնվող բոլոր ապացույցները հետազոտել է իրենց ամբողջության մեջ, իսկ այդ հարցում դատավարական իրավունքի նորմի խախտում թույլ տված չլինելու փաստի արձանագրումը Վերաքննիչ դատարանի կողմից միանգամայն իրավաչափ է:

Հիմք ընդունելով նշվածները, Գերագույն դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼԴՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼԴՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: ... 3. Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան»:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ծախսերը բաղկացած են միայն պետական տուրքի գումարներից, ինչը վճարվել է հայցվոր Պ.Ծատրյանի կողմից: Ընդ որում, վճռաբեկ բողոք ներկայացնելու համար Պ.Ծատրյանը պետական տուրք է վճարել երկու անգամ 20.000 (քսան հազար)-ական ՀՀ դրամ չափով:

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման, եթե վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ: Հետևաբար, հայցվոր Պ.Ծատրյանին անհրաժեշտ է վերադարձնել ավել վճարված 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

Գերագույն դատարանը, նկատի ունենալով, որ սույն վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, գտնում է, որ ավել վճարված պետական տուրքի գումարից բացի, դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Հայցվոր Պավել Ծատրյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԱՀ վերաքննիչ դատարանի 2020 թվականի փետրվարի 12-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Վճռաբեկ բողոքի համար հայցվոր Պավել Գրիգորիի Ծատրյանի կողմից թիվ 200427043889021 առ 27.04.2020թ. վճարման հանձնարարագրով ավել վճարված 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ պետական տուրքը վերադարձնել: Մնացած մասով դատական ծախսի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

ստորագրություն

ստորագրություն

ստորագրություն

ստորագրություն

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՍՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՍՅԱՆ
Կ.ՂԱՐԱՅԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Գերագույն դատարանը, 2020 թվականի մայիսի 25-ին դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Էմմա Սամսոնի Ծատրյանի և Պավել Գրիգորիի Ծատրյանի ընդդեմ Մագուրա Գրիգորիի Պետրոսյանի, ԱՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտարի, ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության՝ նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքները կիրառելու պահանջների մասին քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2020 թվականի փետրվարի 12-ի որոշման դեմ հայցվոր Պավել Ծատրյանի վճռաբեկ բողոքը, 2020 թվականի մայիսի 26-ի որոշմամբ դատավորների ձայների մեծամասնությամբ հայցվոր Պ. Ծատրյանի վճռաբեկ բողոքը մերժել է և ԱՀ վերաքննիչ դատարանի 2020 թվականի փետրվարի 12-ի որոշումը թողել օրինական ուժի մեջ: Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի դատավոր Ի.Կարապետյանը, մասնակիորեն համաձայն չլինելով նշված որոշմանը, ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով, հարկ է համարում շարադրել հատուկ կարծիքը դատարանի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1.Գործի դատավարական նախապատմությունը

Էմմա Սամսոնի Ծատրյանն ու Պավել Գրիգորիի Ծատրյանը 2018 թվականի դեկտեմբերի 4-ին ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի միջոցով հայց են ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին աստիճանի դատարան) ընդդեմ Մագուրա Գրիգորիի Պետրոսյանի, ԱՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտար Նելլի Ենոքի Գրիգորյանի, ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության՝ 2018 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված և նույն օրն ԱՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտարի կողմից վավերացված ու սեղանամատյանի թիվ 4769 համարի տակ գրանցված նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և, որպես անվավերության հետևանք, 22.10.2018թ. թիվ 2210201801-0008 վկայականով հավաստված Մագուրա Գրիգորիի Պետրոսյանի անվամբ կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հիմնավորելով հայցը նրանով, որ գործարքը կնքելու պահին Է.Ծատրյանը վատառողջ էր, գտնվում էր անկողնային վիճակում, հիշողության հետ կապված խնդիրներ ունի, ոչ գրաճանաչ է, չի հաճախել դպրոց, չէր կարող հասկանալ նվիրատվության գործարքի էությունը և հետևանքները, իսկ Պ.Ծատրյանը նույնպես վատառողջ էր, վիրահատություն տարած, գտնվում էր մոլորված, վախեցած վիճակում, նրա մասով առկա է գործարքն անվավեր ճանաչելու ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 311-313-րդ հոդվածներով նախատեսված երեք հիմք: Գործարքի կնքման արդյունքում հայցվորները մնացել են առանց սեփականության, անօթևան մնալու սպառնալիքի պայմաններում: Հայցադիմումում վկայակոչվել են նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ, 14-րդ, 15-րդ, 303-305-րդ հոդվածները:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ:

Առաջին ատյանի դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին հայցվորի միջնորդությունը բավարարվել է և արգելանք դրվել Ստեփանակերտ քաղաքի Գ.Նժդեհի 68/30 հասցեով գտնվող բնակարանի վրա՝ արգելելով պատասխանողին որևէ գործողություն կատարել:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հունվարի 17-ի որոշմամբ հրավիրվել է նախնական դատական նիստ 2019 թվականի փետրվարի 7-ին:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ գործը նշանակվել է դատական քննության 2019 թվականի մարտի 7-ին:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հունիսի 28-ի որոշմամբ հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի միջնորդությունը մասնակի բավարարվել է և հայցվոր Պավել Ծատրյանի նկատմամբ նշանակվել դատահոգեբուժական փորձաքննություն, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև փորձագետի եզրակացությունը ստանալը:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, և գործը նշանակվել դատական քննության 2019 թվականի սեպտեմբերի 18-ին:

Առաջին ատյանի դատարանի (դատավոր Մ.Ստեփանյան) 2019 թվականի նոյեմբերի 22-ի վճռով Պավել Ծատրյանի հայցը մերժվել է, իսկ էմմա Ծատրյանի հայցի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել՝ հայցվորի հայցից հրաժարվելու հիմքով:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), հայցվոր Պ.Ծատրյանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով գործը, իր 2020 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է և Առաջին ատյանի դատարանի վճիռը թողել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2020 թվականի մարտի 12-ին վճռաբեկ բողոք է բերել հայցվոր Պ.Ծատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել պատասխանող Մ.Պետրոսյանի ներկայացուցիչ Ա.Ապրեսյանը:

Գերագույն դատարանի 2020 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ որոշման մեջ նշված ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար, սահմանելով 20-օրյա ժամկետ (որոշումը ստանալու պահից):

Գերագույն դատարանի նշված որոշումը բողոքաբեր Պ.Ծատրյանը ստացել է 2020 թվականի ապրիլի 8-ին և նույն թվականի ապրիլի 27-ին կրկին ներկայացրել վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2020 թվականի մայիսի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական նորմերի խախտումների հիմքերով:

Վճռաբեկ բողոքը բերվել է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

1) Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, անօրինական, չի բխում գործող օրենսդրության պահանջներից, կայացվել է մի շարք նյութական և դատավարական նորմերի խախտմամբ: Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել նյութական իրավունքի նորմերը, մասնավորապես՝ ԼՂՀ

քաղաքացիական օրենսգրքի 313-րդ, 312-րդ, 600-րդ հոդվածները, ինչն ազդել է գործով կայացված վերջնական դատական ակտի վրա:

Նշված պնդումը բողոքում հիմնավորվել է հետևյալ փաստարկներով.

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ, 290-րդ, 311-րդ, 312-րդ, 313-րդ հոդվածների բովանդակությունը և դրանք ենթարկելով վերլուծության, մեջբերելով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները, բողոքաբերը նշել է, որ հայցվոր Պ.Օատրյանը, տառապելով հոգեբանի կողմից նշված հիվանդությամբ (հոգեբանական օրգանական սինդրոմ), ավելի հեշտ է ընկել մոլորության և խաբեության ազդեցության տակ, քան կարող էր ընկնել հոգեպես առողջ մարդը: Թույլ և անկայուն հոգեբանություն ունեցող մարդուն ավելի հեշտ է մոլորության մեջ գցել: Պ.Օատրյանը թեև գործունակ է, սակայն ունենալով ախտորոշված հոգեբանական օրգանական սինդրոմ հիվանդությունը, գործարքը կնքելու պահին ընդունակ չէր հասկանալու իր գործողությունների նշանակությունը, հետևանքները, Պ.Օատրյանի կողմից կնքված նվիրատվության պայմանագիրը չի արտահայտել նրա իրական կամքը: Ըստ բողոքի՝ նվիրատվության պայմանագիրը պետք է իր մեջ կրի նվիրատուի կամքի արտահայտությունը, կամքի արտահայտությունը պետք է լինի սթափ, վստահ, ինչպես նաև նվիրատուն պետք է գիտակցի նվիրատվության պայմանագրի հետևանքները: Պ.Օատրյանն այլ սեփականություն չունի, իր միակ բնակվելու վայրը եղել է վիճելի բնակարանը: Թե՛ պատասխանող Մ.Պետրոսյանին և թե՛ նրա ամուսին Գ.Պետրոսյանին հայտնի է եղել Պ.Օատրյանի հիվանդ լինելու փաստը, և, բնականաբար, վերջիններս գիտեին, թե ինչպես խոսեն նրա հետ և ինչպես ազդեցություն գործեն վերջինիս վրա: Էմմա Օատրյանն իր միակ սեփականությունը չէր նվիրի ոչ ոքի, քանի որ նա այլ բնակվելու տեղ չունեի: Նա դեռևս 22.07.2015թ. արտահայտել էր իր կամքը՝ կազմելով կտակ և բնակարանի իր 1/2 բաժինը կտակելով իր որդի Պ.Օատրյանին: Առկա է համապատասխան ապացույց այն մասին, որ Է.Օատրյանը բազմիցս՝ տարբեր օրերի հստակ ասում էր, որ Մ.Պետրոսյանին տուն չի տալու, քանի որ արդեն ամեն ինչ տվել է, ու եթե տա, ապա ինքը որտեղ պիտի ապրի, տունը Պավլիկինն է: Նշված ապացույցը մտադիր են ներկայացնել նաև իրավապահ մարմիններին: Բողոքաբերը փաստել է նաև, որ իր մայրը՝ Էմմա Օատրյանը, լինելով 86 տարեկան, տառաճանաչ չի եղել և երբեք չի հաճախել դպրոց, եղել է հիվանդ և հաճախ տարբեր բաներ էր խոսում ու, բնականաբար, չէր կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունն ու իմաստը: Բողոքաբերի պնդմամբ՝ նվիրատուները չեն տիրապետել հայերենին և ռուսերեն գրել են «դարյու», մինչդեռ նոտարը պարտավոր էր գործարքը կնքելու ժամանակ հրավիրել թարգմանչին: Բացի այդ, նոտարը նվիրատուներին չի բացատրել նվիրատվության գործարքի հետևանքները:

Ըստ բողոքի՝ ուսումնասիրելով նոտարի ցուցմունքը, կարելի է հաստատված համարել, որ գործարքը կնքման պահից անօրինական է հետևյալ պատճառաբանություններով.

Կողմերը ներկայացել են գրասենյակ սկզբում կտակ կազմելու մտադրությամբ, սակայն նոտարը բացատրել է, որ կտակն ուժի մեջ է մտնում մահից հետո, սակայն նվիրատվության հետևանքները չի բացատրել, ընդամենը նշված է, որ նվիրատուները չեն տիրապետել հայերենին և ռուսերեն գրել են «դարյու»: Ինչու նոտարի կողմից առաջարկվել է նվիրատվության պայմանագիրը, այլ ոչ՝ ռենտայի: Հետաքրքիր ընթացք է ստացել գործը նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո, մասնավորապես, Է.Օատրյանին և Պ. Օատրյանին 2015 թվականի օգոստոսի 15-ից խնամում էր Արթուր Օատրյանը, քանի որ վերջինս փաստացի բնակության վայր էր հաստատել վիճելի բնակարանում: Այդ ընթացքում Ա.Օատրյանը հավուր պատշաճի իրականացում էր թե՛ իր տատիկի և թե՛ իր

հոր խնամքը: Նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո, ինչպես նաև Է. և Պ. Օստրյանների կողմից դատարան դիմելուց մի քանի ամիս հետո անհասկանալի պատճառով Մ.Պետրոսյանը Է.Օստրյանին տանում է իր տուն, որից հետո Է.Օստրյանը հրաժարվում է հայցից, այն էլ իր մտքերը վավերացնում է նոտարը, այն դեպքում, երբ Է.Օստրյանն ունի ներկայացուցիչ:

Բողոքաբերի պնդմամբ՝ դատարանի՝ փորձագետին ուղղված հարցադրումները սխալ են, քանի որ ակնհայտ է, որ պետք է պարզվեր ոչ թե այն, թե Պ.Օստրյանը կարող է արդյոք ներկայումս հասկանալ իր գործողությունների իմաստը և նշանակությունը, այլ՝ գործարքը կնքելու պահին: Ամենակարևոր հանգամանքը, որի վրա ստորագրող դատարանները ուշադրություն չեն դարձրել, այն է, որ փորձագետները փաստել են, որ Պ.Օստրյանը տառապում է նյարդաբանական հիվանդությամբ, հետևաբար պետք է փորձագետներին լրացուցիչ հարցադրումներ ուղղել այն մասին, թե նշված հիվանդությունը գործարքը կնքելու պահին կարող էր բացասական ազդեցություն ունենալ Պ.Օստրյանի վրա, թե ոչ:

2/ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել դատավարական իրավունքի նորմերը, չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 47-րդ, 49-րդ, 121.1-ին հոդվածները:

Շարադրելով վերը նշված հոդվածների և նույն օրենսգրքի 122-րդ հոդվածի բովանդակությունը, բողոքաբերը պնդել է, որ դատարանը գործով բազմակողմանի քննություն չի կատարել, սխալ է գնահատել և համադրել գործում առկա ապացույցները, անտեսել է 122-րդ հոդվածի իմպերատիվ պահանջը և դատական ակտ է կայացրել՝ բացառապես հիմնվելով ներքին համոզմունքի վրա:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ դատարանը կողմերի միջև ճիշտ չի բաշխել ապացուցման բեռը, չի հստակեցրել, թե դատավարության որ կողմի վրա է դրվում գործով էական փաստերի ապացուցման բեռը, դատարանը որևէ ապացուցման բեռ չի դրել գործարքը վավերացրած նոտարի վրա, դատական ակտն ըստ էության չի համապատասխանում Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներին, քանի որ ոչ բոլոր ապացույցներն են հետազոտված հավուր պատշաճի: Առանց քննության են մնացել Է.Օստրյանի կասկածելի միջոտրությունը հայցից հրաժարվելու, որից հետո մեկ ամիս անց վերջինս մահացել է, Պ.Օստրյանին մոլորության մեջ զցելու և բազմաթիվ անգամներ սպառնալու փաստերը, փորձաքննության եզրակացությունը (որը չի կարող լինել արժանահավատ այն պարզ պատճառով, որ այն իրականացվել է մակերեսորեն): Ըստ բողոքի՝ հիշատակված բոլոր հիմքերը գործի ելքի համար ունեն կարևորագույն նշանակություն, քանի որ խոսքը գնում է մարդու ճակատագրի մասին, մարդու միակ ապրելու բնակարանի մասին:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ ստորագրող դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել նյութական և դատավարական նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և անհրաժեշտ է գործով իրականացնել նոր քննություն, քանի որ առկա են նոր երևան եկած փաստական հանգամանքներ, որոնք քննության առարկա չեն դարձվել, և որ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի 12.02.2020թ. որոշումը և այն փոփոխել. կայացնել դատական ակտ՝ ներկայացված հայցապահանջն

ամբողջությամբ բավարարելու մասին, կամ բեկանել որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ այլ կազմով՝ նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Սկզբնական վճռաբեկ բողոքի պատասխանում նշվում է, որ հայցվոր կողմն ինչպես վերաքննիչ բողոքում, այնպես էլ վճռաբեկ բողոքում, վկայակոչելով ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 3-11-րդ, 313-րդ, 312-րդ, 600-րդ հոդվածները, նկատի է ունեցել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 311-313-րդ, 600-րդ հոդվածների պահանջները, սակայն իր կողմից վկայակոչված հոդվածների պահանջների խախտումները հիմնավորող որևէ ապացույց կամ հիմնավորում ո՛չ վերաքննիչ բողոքում և ո՛չ էլ վճռաբեկ բողոքում չի ներկայացրել: Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները սույն գործի քննության ընթացքում նյութական և դատավարական նորմերի խախտումներ թույլ չեն տվել ու դատաքննությամբ ձեռք բերված, հետազոտված ու հիմնավորված ապացույցների հիման վրա կայացրել են օրինական և պատճառաբանված դատական ակտեր, ուստի բողոքն ակնհայտ անհիմն է, ավելին՝ բացակայում են այն վարույթ ընդունելու դատավարական հիմքերը:

Վճռաբեկ բողոքի պատասխանի հեղինակը նշել է նաև, որ այն հանգամանքը, որ նվիրատու Պ.Ծատրյանը մինչև նվիրատվության պայմանագիր կնքելը և պայմանագիրը կնքելու ընթացքում չի եղել մոլորության կամ խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, և կողմերի միջև կնքված նվիրատվության պայմանագիրն արտահայտել է նվիրատու Էմմա և Պավել Ծատրյանների իրական կամքը, ու միայն պայմանագիրը կնքելուց որոշակի ժամանակ անց է Պ.Ծատրյանը մտափոխվել, բացի Պ.Ծատրյանի ցուցմունքից, հիմնավորվել է նաև պատասխանողներ Մ.Պետրոսյանի, նոտար Ն.Գրիգորյանի, վկա Գ.Պետրոսյանի ցուցմունքներով, դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1. Թիվ 103095 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Գ.Նժդեհի փողոցի թիվ 68 շենքի թիվ 30 հասցեում գտնվող բնակարանն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Էմմա Սամսոնի Ծատրյանին և Պավել Ծատրյանին (հատոր 1-ին, գ.թ.11):

2. 2018 թվականի հոկտեմբերի 16-ին նոտարական կարգով վավերացված նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Էմմա Սամսոնի Ծատրյանի, Պավել Գրիգորիի Ծատրյանի և Մագուրա Գրիգորիի Պետրոսյանի միջև կնքվել է անշարժ գույքի (բնակարանի) նվիրատվության պայմանագիր, ըստ որի՝ Է.Ծատրյանը և Պ.Ծատրյանը համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ստեփանակերտ քաղաքի Գ.Նժդեհի փողոցի թիվ 68 շենքի թիվ 30 բնակարանը նվիրել են Մագուրա Պետրոսյանին (հատոր 1-ին, գ.թ.14):

3. Նվիրատվության պայմանագրի հիման վրա 2018 թվականի հոկտեմբերի 22-ին գրանցվել է Մագուրա Պետրոսյանի սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ.15):

4. Հայցվոր Է.Ծատրյանը 2019 թվականի մարտի 29-ին նոտարական կարգով վավերացված դիմում է ներկայացրել դատարան՝ ինչպես հայցից, այնպես էլ փաստաբանի ծառայություններից հրաժարվելու և վերջինիս լիազորությունները դադարեցնելու մասին (հատոր 1-ին, գ.թ.121-122):

5. Հայցվոր Է.Ծատրյանը 2019 թվականի ապրիլի 23-ին մահացել է (հատոր 1-ին, գ.թ.142):

6. 2019 թվականի օգոստոսի 20-ի թիվ 58/19 դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Պավել Օատրյանը չի տառապել և ներկայումս չի տառապում որևէ հոգեկան հիվանդությամբ, առկա է «Գլխուղեղի օրգանական ախտահարման մնացորդային երևույթներ, ասթենո ներտոսիկ համախտանիշ» նյարդաբանական հիվանդություն: Ներկայումս Պավել Գրիգորիի Օատրյանը հասկանում է իր գործողությունների փաստացի նշանակությունը և կարողանում է ղեկավարել իր գործողությունները: Ուստի, Պ. Գրիգորյանին հարկ է ճանաչել գործունակ (հատոր 2-րդ, գ.թ.3-7):

7. Ըստ ԱՀ ոստիկանության Ստեփանակերտի քաղաքային վարչության ավագ հետաքննիչ Ս. Մարգարյանի քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2018 թվականի նոյեմբերի 3-ի որոշման՝ 24.10.2018թ. ԱՀ ոստիկանության Ստեփանակերտի քաղաքային վարչություն է մուտքագրվել Պավել Օատրյանի դիմումն առ այն, որ 2018թ. փետրվարի վերջերին իր որդի Արթուր Օատրյանն իրենից 140.000 և 35.000 ՀՀ դրամ է պահանջել, հետագայում՝ հոգեբուժարան կամ ծերանոց չտանելու սպառնալիքները պարբերաբար կրկնելով պահանջել է նաև իր անվամբ դրված ավանդի գումարը՝ 10.000.000 ՀՀ դրամը ձևակերպել նրա անվամբ: Ստուգված նյութերով որոշվել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածով չիրականացնել քրեական հետապնդում և մերժել քրեական գործի հարուցումը՝ Արթուր Օատրյանի արարքում հանցակազմի բացակայության հիմքով (հատոր 1-ին, գ.թ.16):

8. 2018 թվականի դեկտեմբերի 4-ին բողոքաբեր Պ.Օատրյանի և հանգուցյալ (հայցվոր) Էմմա Օատրյանի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը հայցադիմում է ներկայացրել դատարան՝ 16.10.2018թ. կնքված նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին:

9. Ըստ գործի նյութերի՝ բնակարանի 1/2 Է.Պետրոսյանը նախկինում կտակել է Պ.Օատրյանին, Պ.Օատրյանը ցանկացել է բնակարանը կտակել իր եղբոր որդուն, սակայն նա հրաժարվել է առաջարկից՝ պահանջելով ձևակերպել նվիրատվություն: Առաջին ատյանի դատարանի դատաքննության ընթացքում պատասխանող Մ.Պետրոսյանի ցուցմունքից հետևում է, որ Պ.Օատրյանն ասել է. «Ինձ կպահեք, թաքի մինչև վերջ կենամ բնակարանում, հողին կհանձնեք...վերջին «ցելը» իմ տղան ինձ ծերանոց է ուղարկելու», իսկ նույն դատական նիստում նոտարի ցուցմունքից հետևում է, որ Պ.Օատրյանը «շատ մտահոգված, վախեցած էր, մի քանի անգամ իրեն բացատրել եմ...(8.04.2019թ. Առաջին ատյանի դատական նիստի արձանագրություն, հատոր 1-ին, գ.թ.134):

10. Առաջին ատյանի դատարանը, գտնելով, որ հիմքեր չկան 16.10.2018թ. նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու համար (չի ապացուցվել մոլորության, վախի, խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության տակ կնքելը), Պ.Օատրյանի հայցը մերժել է, իսկ Է.Օատրյանի մասով՝ գործի վարույթը կարճել՝ հայցից հրաժարվելու հիմքով: Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ, նույնպես գտնելով, որ վիճարկվող գործարքը չի կնքվել էական նշանակություն ունեցող մոլորության, խաբեության և սպառնալիքի ազդեցության տակ:

11. Հայցվոր Պ.Օատրյանը 3-րդ կարգի հաշմանդամ է, այլ բնակվելու տեղ չունի:

12. Հայցվոր Պ.Օատրյանը վիճարկվող գործարքը կնքել է կամքի արատի հետևանքով:

4. Դատավոր Ի. Կարապետյանի հատուկ կարծիքը

Հարկ է նշել, որ սկզբնական վճռաբեկ բողոքը Գերագույն դատարանի 2020 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ վերադարձվել է բողոքում թույլ տրված ձևական սխալները շտկելու և բողոքը կրկին ներկայացնելու համար: Կրկին

ներկայացված վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ այն պատճառաբանությամբ, որ բողոքը համապատասխանում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին և բողոքում բարձրացված են մարդու Սահմանադրությամբ երաշխավորված հիմնական իրավունքներին վերաբերող հարցեր: Այսինքն՝ Գերագույն դատարանը կարևորել է սեփականության իրավունքի, բնակտարածության նկատմամբ անձի իրավունքի, կյանքի ծանր պայմաններում գտնվող անձի պաշտպանության հարցերը:

Գտնում եմ, որ վճռաբեկ բողոքը պետք է մասնակիորեն բավարարել բողոքաբեր Պավել Օստրյանի մասով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել (բնակարանի 1/2 մասով անվավեր ճանաչել վիճարկվող նվիրատվության պայմանագիրը), քանի որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Նշված եզրակացության եմ հանգել հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝ Արցախի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «1. Արցախի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

4. Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան:»:

Արցախի Հանրապետության Սահմանադրության՝ «Սեփականության իրավունքը» վերտառությամբ 60-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից՝ բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, «Սեփականության իրավունք» վերտառությամբ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածների համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավունք, որպեսզի իր գործը քննվի արդարացիորեն, հրապարակայնորեն և ողջամիտ ժամկետում, յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր սեփականության հարգանքի իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել իր սեփականությունից այլ կերպ, քան միայն ելնելով հասարակության շահերից և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններում:

Մեկնաբանելով վերը նշված սահմանադրական և կոնվենցիոն նորմերը, գտնում եմ, որ կոնկրետ վեճը լուծելիս դատարանները պետք է իրենց եզրակացությունները և հետևությունները միշտ անեն նշված հոդվածների

համատեքստում (որպեսզի ճիշտ պատասխանեն այն հարցերին, թե խախտված են արդյոք դատարան դիմած անձի իրավունքները, և նա ունի արդյոք դատական պաշտպանության կարիք), և նույնիսկ վեճը կարգավորող նորմերի բացակայության պարագայում այն լուծել՝ հաշվի առնելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները և նորմերը:

Քանի որ քննարկվող վեճը վերաբերում է քաղաքացիական ոլորտին, ապա գտնում եմ, որ պետք է անդրադառնալ նախ հայրենական քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում **իրենց կամքով և ի շահ իրենց**: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածը, սահմանելով քաղաքացիական իրավունքներն իրականացնելու սահմանները, արգելում է այդ իրավունքների չարաշահումը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի գործարքի հասկացությունը սահմանող 289-րդ հոդվածն ամրագրում է. «Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն»: Իսկ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պայմանագրի կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի ... համաձայնեցված կամքի արտահայտությունը:

Վերը նշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ քաղաքացիական իրավահարաբերություններն այլ իրավահարաբերություններից տարբերվում են նախ և առաջ նրանով, որ, որպես կանոն, դրանք կամային հարաբերություններ են, և որ քաղաքացիական օրենսդրության կարևոր սկզբունքներից մեկն իրավահարաբերության մասնակիցների կամքի ազատ իրականացման սկզբունքն է: Հարկ է արձանագրել նաև, որ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները գործարք են կնքում որոշակի նպատակով և այդ նպատակին հասնելու համար արտահայտում են իրենց կամքը, որն էլ պետք է արտահայտվի առանց որևէ արտաքին ազդեցության, ուստի այն դեպքում, երբ գործարք կնքող անձն ազատ չի արտահայտել իր կամքը, արտաքին ազդեցության հետևանքով նրա կամքը խաթարվել է, նա իրավունք ունի վիճարկել այդպիսի կամահայտնությամբ կնքված գործարքը:

Հարկ եմ համարում շեշտել, որ անձի իրական կամքը հայտնաբերելը դատական պրակտիկայում կարող է որոշակի դժվարություններ առաջացնել: Կամքը ներքին հոգեկան հատկանիշ է, որն ուրիշների համար չի երևում: Որպեսզի կամքը կարողանա հիմք հանդիսանալ մեկ ուրիշի հետ համաձայնության գալու համար, անհրաժեշտ է, որպեսզի այն արտահայտված լինի որևէ արտաքին նշաններով: Այն արտահայտվում է անձի գործողություններով, խոսքերով, հանգամանքների տրամաբանական ընթացքով և այլն: Պայմանագրի ծագման համար անհրաժեշտ է ոչ միայն կամքը, այլև կամահայտնությունը: Սակայն տարբեր պատճառներով կարող է

այնպես ստացվել, որ կամահայտնությունը չհամապատասխանի անձի իրական կամքին: Եվ հարց է ծագում. ինչի՞ն պետք է տալ նախապատվությունը՝ իրական կամքին, թե կամահայտնությանը: Իմ կարծիքով, յուրաքանչյուր գործարքի ուժը կայանում է կողմերի իրական կամքի և մտադրությունների մեջ, և որտեղ չկա այդպիսի կամք, խոսք չի կարող լինել պայմանագրի իրական արդյունավետության մասին, կա միայն վերջինիս ձևական, տեսանելի առկայությունը, այլ ոչ թե դրա էությունը: Մարդու (անձի) սխալ (իր դեմ կայացված) որոշումը չի կարող ճանաչվել օրինական, արդարացի և հիմք հանդիսանալ նրա հաշվին մեկ այլ անձի հարստացմանը: Պայմանագրերի ոլորտում պետք է որպես առաջնային դիտարկել կամքի, այլ ոչ թե կամահայտնության սկզբունքը: Միայն կողմերի իրական, գիտակցված, հավասարակշռված կամքը կարող է հիմք հանդիսանալ պայմանագրով նախատեսված իրավունքների և պարտականությունների ծագման համար: Ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից՝ դատարանն է որոշում, թե կնքված գործարքով խախտվե՞լ է արդյոք կամքի ազատ արտահայտության և ի շահ իրեն իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելուն ուղղված գործողություններ կատարելու՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքը:

Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների խախտված իրավունքների վերականգնումն ապահովելը, դրանց դատական պաշտպանությունն օրենսդիրը ևս դիտում է իբրև հիմնարար սկզբունք: Այդ սկզբունքի իրականացումն իրագործվում է գործարքների անվավերության ինստիտուտի միջոցով:

Այսպես՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կետերի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է առաջինը գործարքի անվավերության հետևանքները կիրառելով, վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելով և դրա անվավերության հետևանքները կիրառելով:

Գործարքների անվավերության ինստիտուտին նվիրված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ բաժնի 19-րդ գլխի 2-րդ պարագրաֆը (հոդվածներ 303-317-րդ):

Քաղաքացիական օրենսգրքի նշված գլուխը ուղղված է ԱՀ Սահմանադրության 3-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածներով նախատեսված դրույթների իրական ապահովմանն այն առումով, որպեսզի քաղաքացիական իրավահարաբերություններում բացառվեն խաբեությունը, բռնությունը, սպառնալիքը, չարամիտ համաձայնությունը, ծանր հանգամանքներից օգտվելով՝ կողմի համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով գործարքների կնքումը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առաջինը է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ: Օրենսգրքի մյուս հոդվածները սահմանում են գործարքի անվավերության կամ առաջնության կոնկրետ հիմքեր՝ 306-րդը՝ կեղծ և շինծու գործարքների անվավերություն, 307-րդը՝ անգործունակ ճանաչված քաղաքացու կնքած գործարքի անվավերություն, ..., 311-րդը՝ իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու անընդունակ քաղաքացու կնքած գործարքի անվավերություն, 312-րդը՝ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի անվավերություն, 313-րդը՝ խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո մեկ կողմի ներկայացուցչի՝ մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կամ ծանր հանգամանքների բերումով կնքված գործարքի անվավերություն, ...:

Պետք է ընդգծել նաև, որ օրենքների որոշակի և հնարավորինս կանխատեսելի լինելու պահանջը չի նշանակում, որ օրենքները պետք է կարգավորեն բոլոր մանրամասնությունները, իսկ դատարանները՝ մեխանիկորեն կատարեն դրանց հանձնարարականները: Ոչ մի օրենք չի կարող հաշվի առնել իրավական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների բազմազանությունը և հստակ կանոնակարգել քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների այս կամ այն վարքագիծը: Այդ կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է. «Որքան էլ նորմը հստակ ձևակերպվի իրավունքի ցանկացած համակարգում ... դատական մեկնաբանման տարրն անխուսափելի է: Միշտ գոյություն կունենա խրթին դրվագների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին հարմարվելու անհրաժեշտություն»:

Գտնում եմ, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի կարգավորումներից բխում է, որ նշված հոդվածով սահմանված նորմը կրում է ընդհանուր բնույթ և տարածվում է բոլոր այն դեպքերի վրա՝ նախատեսված կամ չնախատեսված նույն օրենսգրքով: 305-րդ հոդվածում սահմանված ընդհանուր կանոնի առկայությունն օրենսդրին հնարավորություն է տվել առանձնահատուկ կարգավորման ենթարկել օրենքին չհամապատասխանող գործարքների միայն հիմնական, առավել տիպական տեսակները և օրենսգրքում չթվարկվել անվավեր գործարքների բոլոր տեսակները:

Համաձայնելով Գերագույն դատարանի որոշման այն հետևությանը, որ գործով ձեռք չեն բերվել Պ.Ծատրյանի կողմից նվիրատվության պայմանագիրը խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո կնքված լինելու վերաբերյալ ապացույցներ, միաժամանակ համաձայն չեմ, որ գործով չկան այլ հիմքեր վիճարկվող պայմանագիրն անվավեր ճանաչելու համար, մասնավորապես, այն էական մոլորության ազդեցության տակ կնքված լինելու հիմքով (ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդված) կամ էլ որպես օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարքի անվավերության հիմքով (նույն օրենսգրքի 305-րդ հոդված)՝ ելնելով հետևյալից.

«Մոլորություն» բառի բացատրությունից հետևում է, որ այն նշանակում է 1) ուղիղ ճանապարհից դուրս գալը՝ շեղվելը, 2) սխալ հայացք՝ պատկերացում՝ միտք, ...: Մոլորության բառի հոմանիշներն են սխալ, սխալմամբ, թյուրություն, զառանցանք, ...:

«Մոլորությունը» գնահատողական հասկացություն է և պատահական չէ, որ օրենսդիրը սահմանել է, որ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը կարող է վիճարկվել միայն այդ գործարքի կողմ հանդիսացող անձի կողմից: Նման սահմանափակումը պայմանավորված է, իմ կարծիքով, այն հանգամանքով, որ մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի դեպքում կողմի կամքի խեղաթյուրման փաստի առկայության մասին օբյեկտիվորեն կարող է փաստարկվել միայն այն անձը, ով գտնվել է էական մոլորության ազդեցության տակ:

Դատարանները, մեկնաբանելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի բովանդակությունը, չեն պատասխանել այն հարցին, թե կողմը (հայցվոր Պ.Ծատրյանը) հասել է արդյոք այն նպատակին, որին ուղղված է եղել նրա կամքը, և որը նա նկատի է ունեցել գործարքը կնքելիս: Այդ կապակցությամբ գտնում եմ, որ դատարանները ճիշտ գնահատական չեն տվել կողմերի ցուցմունքներին, գործում առկա փաստաթղթերին:

Բացի այդ, գտնում եմ, որ հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքների մատնանշումը հայցադիմումի մեջ համարվում է տվյալ հիմքով հայցի ներկայացում, և դատաքննության ընթացքում կարող է չհաստատվել այս կամ այլ հիմքի առկայությունը, կամ այդ հանգամանքների իրավական բնորոշումը սխալ լինի:

Գերագույն դատարանն իր նախկինում կայացրած որոշման մեջ արձանագրել է, որ հայցի հիմքը, որպես հայցի բովանդակության տարր, հայցը բնութագրում է այն տեսանկյունից, թե ինչ իրավաբանական փաստերի հիման վրա է հայցվորը խնդրում պաշտպանել իր նյութաիրավական պահանջը: Այդ իրավաբանական փաստերն էլ հենց հանդիսանում են հայցի հիմքը: Դատարանը կաշկանդված չէ հայցվորի հայտարարած փաստերի իրավական որակմամբ և պարտավոր է իրավական գնահատական տալ, իրավաբանորեն որակել հենց հայցվորի ցույց տված իրավաբանական փաստերը: Ընդ որում, ի տարբերություն հայցի հիմքի իրավաբանական փաստերի, հայցի իրավական հիմնավորումը հայցվորի կողմից կարող է փոփոխվել վարույթի բոլոր փուլերում, այդ թվում՝ դատաքննության ժամանակ, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ վերանայման ընթացքում: Քաղաքացիական գործի քննության և լուծման համար անհրաժեշտ իրավական նորմերը որոշելը և կիրառելը դատարանի պարտականությունն է: Դատարանը բոլոր դեպքերում դատական քննության ենթակա վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նորմերը ընտրում և կիրառում է՝ ելնելով հայցի հիմքում ընկած իրավաբանական փաստերից, այլ ոչ թե հայցվորի վկայակոչած իրավական նորմերից /որոնք կարող են նույնիսկ ոչ ճիշտ վկայակոչված լինեն/:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Դոդովն ընդդեմ Բուլղարիայի գործով իր 17.01.2008թ. վճռում նշել է, որ «քաղաքացիական դատավարությունում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ դատարանները քննության են առնում և որոշում իրենց ներկայացված հայցերի իրավական բնութագիրը՝ առանց հաշվի առնելու հայցվորի առաջարկած իրավական բնութագիրը: Հայցվորը պետք է ներկայացնի վիճելի հարցը՝ հստակեցնելով փաստերը և իր հայցապահանջը, սակայն նա չի կրում որևէ պարտականություն՝ հստակեցնելու դրա բնութագիրն իրավունքում: Եթե նույնիսկ հայցվորը նշում է իր հայցի իրավական բնութագիրը, դատարանը կաշկանդված չէ դրանով: Դատարանը պետք է տա իր ինքնուրույն գնահատականը» (տես՝ ԸԻԴ/0110/02/18 քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 15.02.2017թ. որոշումը):

Գտնում եմ, որ Պ.Օատրյանի մասով դատարաններն անտեսել են, որ Պ.Օատրյանը 3-րդ կարգի հաշմանդամ է, տառապում է գլխուղեղի նյարդաբանական հիվանդությամբ, չունի այլ սեփականություն և բնակվելու տեղ, վիճելի պայմանագիրը կնքելուց 9 օր հետո դիմել է ոստիկանություն՝ իր որդու կողմից իր դրամական միջոցներին (10.000.000 ՀՀ դրամին) տիրանալու մասին, պայմանագիրը 16.10.2018թ. կնքելուց հետո կարճ ժամկետում՝ 4.12.2018թ., դիմել է դատարան այն անվավեր ճանաչելու հայցով, մինչև վիճարկելի պայմանագիրը կնքելը փորձել է բնակարանը կտակել եղբոր որդու, հետո՝ քրոջ՝ պատասխանող Մ.Պետրոսյանին, պայմանագիրը կնքելուց հետո այն չի կատարվել, գույքը փաստացի չի փոխանցվել նվիրատուին (մինչդեռ, նվիրատվության պայմանագիրը դասվում է գույքի օտարման պայմանագրերի շարքին): Դատարանները միայն հիմք են ընդունել և դատական ակտերում շարադրել հայցվոր Պ. Օատրյանի սկզբնական ցուցմունքները, չգնահատելով հայցվորի դիրքորոշման փոփոխությունները մյուս դատական նիստերում, չեն գնահատվել պատասխանող Մ.Պետրոսյանի ցուցմունքներն այն մասին, որ Պ.Օատրյանը ցանկացել է բնակվել բնակարանում մինչև կյանքի վերջը, նոտարի ցուցմունքներն այն մասին, որ Պ.Օատրյանը շատ մտահոգված, վախեցած էր: Առաջին ատյանի դատարանը վկաներ Ա.Օատրյանի, Հ.Օատրյանի, Լ.Օատրյանի և Մ.Պետրոսյանի ցուցմունքներին (որոնք վերաբերում էին Պ.Օատրյանի վարքագծին և նրա գործողություններին) որևէ գնահատական չի տվել, գտնելով, որ գործի լուծման համար դրանք որևէ էական նշանակություն չունեն: Մինչդեռ, դրանք կարող էին ապացույցներ

հանդիսանալ Պ.Օատրյանի իրական մտադրության, երկյուղի մեջ գտնվելու, հետևաբար կամքի շեղվածության մասին:

Հետևաբար անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից դատավարական նորմերի սխալ կիրառման մասին վճռաբեկ բողոքի փաստարկներին, գտնում եմ, որ դրանք հիմնավոր են՝ ելնելով հետևյալից.

Ապացույցների և ապացուցման ինստիտուտները կարգավորվում են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-63-րդ հոդվածներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ գործով ապացուցման ենթակա փաստական հանգամանքների ամբողջությունը կազմում է ապացուցման առարկայի հիմնական բովանդակությունը: Բայց դա դեռ բավարար չէ ամեն մի գործով քննության բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունն ապահովելու համար: Ապացուցման առարկան ավելի լայն հասկացություն է, դրա մեջ մտնում են նաև այն փաստական հանգամանքները, որոնց պարզաբանումն անհրաժեշտ է գործին ճիշտ լուծում տալու համար:

Գերագույն դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է նշված հարցին (տես՝ օրինակ, Գերագույն դատարանի 30.07.2015թ. որոշումը թիվ 1797/02/11 քաղաքացիական գործով): Այսպես, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ «...այս կամ այլ հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը, ինչը բխում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասից, ... : Դատարանի խնդիրն է պարզել, թե ինչ ապացույցների հետազոտմամբ է հնարավոր հաստատել կողմերի պահանջների և առարկությունների հիմքում ընկած իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը:»

Յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու և պարզելու, թե գործի համար նշանակություն ունեցող որ փաստերն են ապացուցվել և որոնք չեն ապացուցվել, թե տվյալ գործով որ իրավական նորմերն են կիրառման ենթակա (ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդված), տվյալ անձի իրավունքները խախտվել են արդյոք, թե ոչ:

Գտնելով, որ սույն գործով դատարանները ճիշտ չեն գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, համաձայն չեմ նաև Գերագույն դատարանի այն դիրքորոշմանը, որ Առաջին ատյանի դատարանը գործում գտնվող բոլոր ապացույցները հետազոտել է իրենց համակցության մեջ:

Ավելորդ չեմ համարում նշել, որ մեկնաբանելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պարտավորեցրել է ազգային իշխանություններին ապահովել արդար բալանս (հավասարակշռություն) կողմերի մրցակցող շահերի միջև: Եվրոպական դատարանն իր նախադեպային պրակտիկայում ելնում է նրանից, որ, թեև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում բացակայում է բնակտարածությամբ ապահովելու իրավունքի սահմանումը, այնուամենայնիվ, ցանկալի է, որպեսզի յուրաքանչյուրն ունենա տեղ, որտեղ

նա կարող է արժանապատվությամբ ապրել, և որը նա կարող է անվանել տուն (18.01.2001թ. Լին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով):

Նշվածից հետևում է, որ սեփականության (բնակօգտագործման) իրավունքն այն բնակտարածության նկատմամբ, որը հանդիսանում է քաղաքացու համար միակ մշտական բնակության համար պիտանի, չի կարող դիտվել որպես բացառիկ տնտեսական իրավունք, քանի որ այն կատարում է սոցիալ կարևոր ֆունկցիա և քաղաքացու համար ապահովում է մի շարք հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումը:

Ամփոփելով վերոգրյալները, գտնում եմ, որ վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար է՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու և այն փոփոխելու համար: Միաժամանակ գտնում եմ, որ տվյալ դեպքում անհրաժեշտ էր կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Գերագույն դատարանի լիազորությունը. հայցվոր Պավել Ծատրյանի վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարվեր. հայցը մասնակիորեն բավարարվեր և բնակարանի 1/2 մասի (Պ.Ծատրյանի բաժնի մասով) վերաբերյալ 16.10.2018թ. կնքված նվիրատվության պայմանագիրը և այդ մասով Մ.Պետրոսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչվեին:

ԴԱՏԱՎՈՐ
26.05.2020թ.

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ